ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳԱՄԻՐՔԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ

ՏՆԱՅՆԱԴՈՐՄՈՒԹՅՈՒՆ, ԱՐՀԵՍՏՆԵՐ ԵՎ ՔԱՐԱՎԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գամիրքի հայ ազգաբնակչության հիմնական զբաղմունքը գյուղերում հանդիսանում էր երկրագործությունն ու անասնապահությունը և նախալեռնային որոշ շրջաններում՝ այգեգործությունը, իսկ քաղաքներում՝ արհեստները ու առևտուրը։ Մոռանալու չէ, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը Գամիրքի որոշ շրջանների զբաղմունքները շատ չէին հեռացել վաղ անցյալում գոյություն ունեցած զբաղմունքներից։ Ավելին, դեռևս ասորեստանյան և խեթական տարեգրերի, հին կտակարանի, ինչպես նաև Հերոդոտի և Սարաբոնի վկայությամբ Գամիրքի լեռնային շրջաններում ապրող ցեղերի գլխավոր զբաղմունքը հանդիսացել է անասնապահությունը։ Մինչև վերջերս «Ուզուն յայլայի» լեռնաշղթայում զբաղվում էին ձիաբուծությամբ, Բոնուզի շրջանում՝ ոչխարաբուծությամբ, իսկ Ազդազի շրջանում՝ հատկապես այծաբուծությամբ։ Մինչև Արզեոսի շրջաններից մինչև Սարոսի վերին հովտում գտնվող Կյուրինի, Դարենտեի, իսկ Վերին Եփրատի սահմաններում՝ Ակնի, Արարկիրի շրջանը Սարգոն Ակկադի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, աչքի են ընկել այգեգործությամբ։ Անախտավրոսյան երկրի այդ շրջանից է, որ, ինչպես ասվեց սկզբում, Սարգոն Ակկադը ծիրանի, սալորի, թթենի, խնձորի և այլ ծառեր է փոխադրել Ասորեստան։

Այժմյան Կեսարիայի շրջաններում՝ Կանեշում (այժմ Գոմաժ), Պուրուշհանդայում մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջերին հաստատված են եղել ասուրական առևտրական գաղութներ։ Հետևաբար Կեսարիան ինչպես անցյալում, այնպես և մինչև վերջերս հանդիսացել է Փոքր Ասիայի առևտրական գլխավոր կենտրոններից մեկը։

Հետաքրքրական է նաև այն, որ խեթական Արինա (հետագայում հավանաբար Արի-արաթա) քաղաքը, համաձայն Գամիրքում հայտնաբերված գրավոր փաստերի, հանդիսացել է ջուլհակների առանձնաշնորհյալ քաղաք։ Այն եղել է Սարոսի հովտի ստորին մասում՝ այժմյան Կյուրինի շրջանում։ Այդ մասին խեթական կոդեքսում ասված է, որ՝ «Երբ մեկը Արինա քաղաքում ջուլհակությամբ ուզենար զբաղվել, նրա կինը, ընտանիքի անդամները և ազգականները ազատագրվում էին... իրենց դաշտային ստրկական պարտավորություններից»[2]։ Այսպես, ուրեմն, դեռևս երկրորդ հազարամյակի կեսերին (մ. թ. ա.) եթե խեթական Արինան հանդիսանում էր ջուլհակության առանձնաշնորհյալ քաղաք, տպա Պտղոմեոսյան շրջանի Կորանեան, հետագայում Կյուրինը, մեծ համբավ էր վայելում ջուլհակությամբ և հատկապես իր շալագործությամբ։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ դեռևս հնագույն ժամանակներից յուրաքանչյուր շրջան ելնելով իր նյութա-կուլտուրական բազայից, բնական պայմաններից և աշխարհագրական դիրքից, մղում է տվել

---

[1] F. Hrozny, Code Hittite, Paris, 1922, § 51.

[2] Նույն տեղում։

այն զբաղմունքներին, որոնք ավելի կարևոր էին և միաժամանակ նպաստավոր պայմաններ ունեին տվյալ շրջաններում։ Մյուս կողմից նկատելի է, որ աշխատանքի արտադրողականության դանդաղ զարգացման հետևանքով նույն զբաղմունքները միևնույն շրջանում պահպանվել էին մինչև 20-րդ դարի սկզբները, ուստի և Գամիրքի գյուղատնտեսական շրջաններում, եթե մինչև համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակը գերիշխում էր բնափակ տնտեսությունը և նրա հետ սերտորեն կապված նաև անալնագործությունը, ապա քաղաքներում գոյություն ունեին արդեն բազմազան պրոֆեսիաների գծով արհեստներ։ Այսպես, ուրեմն, Գամիրքում կիրառվող արհեստներից մի քանիսը, մինչև համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակը, գյուղական վայրերում առավել կամ նվազ չափով դեռևս պահպանել էին իրենց տնայնագործական բնույթը։ Օրինակ, ջուլհակությունը, գորգագործությունը, կավագործությունը, սայլաշինությունը առանձին գյուղերում նաև երկաթագործությունը արհեստներ էին, որոնք, ինչպես ասվեց, քաղաքներում արդեն պրոֆեսիոնալ բնույթ էին ստացել և արհեստավորները ամբողջ տարին չուկայի համար սպրդանք էին արտադրում։

Քաղաքային արհեստավորները, հատուկ մի փողոցում ունեին իրենց կրպակ-աշխատանոցը, ուր իրենց բնաանիքի անդամներով (որդի, եղբայր, ըստ արհեստի տեսակի երբեմն և կինն ու աղջիկը) պատրաստում էին զանազան իրեր, ապրանքներ և վաճառում ուղղակի հաճախորդին։ Սակայն այդ արհեստավորների մի մասը թեև ուներ իր գործիքները, բայց աշխատում էր վաճառականի հաշվին։ Կային նաև արհեստավորներ, որոնք արդեն զրկվել էին իրենց արտադրության միջոցներից, վարպետների արհեստանոցում աշխատում էին օրավարձով՝ որպես բանվոր։ Այնինչ գյուղական տնայնագործները տարվա որոշ ամիսներին, այն էլ միայն կանայք, պատրաստում էին իրենց տնտեսության համար անհրաժեշտ իրերը, առարկաները։ Օրինակ՝ նահապետական հողագործ ընտանիքի հարսները, շաֆաս աղջիկները բուրդը գզում, մանում, ներկում և գործում էին, տղամարդկանց հագուստի՝ աբայի, բոյ-աբայի, բեղեն-աբայի, վերոնի, չալվարի, գլխանոցի (բալլի) համար տեղական կերպաս, սպիտակեղենի համար՝ կտավ, ինչպես նաև մեջքի գոտի, խոնջան, դոլաղ և այլն, իսկ տնային գործածության համար՝ բրդից ջեջիմ, կապերտ, գորգ և ճանճային բույսերից՝ պըրտուից, կնունից, նաև խըսիր (փսիաթ) և այլն, մթերքների պահպանության ու փոխադրության համար՝ խուրջին, հնյբե (երկար խուրջին), ալյուրի ջվալ՝ սեղլեմ, խաrար, տեկմե և այլն։

Ջուլհակությունը։ Գամիրքի գյուղերում տնայնագործ ջուլհակը կոչվում էր հոr զործող։ Տեղում այդպես էին անվանում ջուլհակին այն բանի համար, որ նա, աշխատելիս ոտները կախում էր հորի (փոսի) մեջ, որի վրա շինված էր լինում ջուլհակի նստատեղը։

Տնայնագործներն օգտագործում էին երեք տեսակ հաստոց (տորբ). ա) գեռնազործ կամ տաքիզործ տորբը գործ էր ածվում նեղ շսիով ջեջիմ, մեջքի գոտի, դոլաղ, խոնջան գործելու համար, որը գործվածքային արտադրության միջոցների մեջ ամենանախնականն էր, բ) հորը՝ հորիզոնական տորբը[6] հանդիսանում էր Գամիր-

[3] Տե՛ս հավելվածում Սերաստիա (Սվաղ) քաղաքի զանազան արհեստների անունները և արհեստավորների մոտ օգտագործված բանվորների թիվը։

[4] Գամիրքի երկու մեծ քաղաքներում այդ արհեստներն ունեին իրենց հատուկ տերմիններ։ Սերաստիայում գործածված տերմինների բառարմատները եթե թուրքերենից փոխառություն են, ապա նրանց վերջավորությունը հայերեն «նոց»-ն է, իսկ Կեսարիայում՝ «ալեր»։ Այսպես, Սերաստիայում՝ սեմերչինոց, Կեսարիայում՝ սեմերչիյեր, դաղանչինոց, դաղանչիյեր, դալայչինոց, դալայչիյեր և այլն։

[5] Հորը կամ ֆերը ուներ 2—3 մետր երկարություն, մոտ մեկ մետր խորություն և մեկ մետր լայնություն։

[6] Հորը այն փոսն է, որի վրա շինված է հորիզոնական տորբը։ Տորբն ունի լորս տափան, որոնց վրա հաստատված է տորբի ամբողջ կազմածը։ Տորբը բաղկացած է հետևյալ մասերից՝ սալմիներ, որի վրա փաթաթվում է գործվածքը, մալպարը՝ առաջինի հիշտ դիմացը դետեղված կաղնու փայտե կամ երկաթե մի ձող, որը գործ է ածվում փար տալու, այսինքն՝ հենքը պրկելու համար։ Տուֆան կամ տեֆը այն շրջանակն է, որի մեջ դետեղվում է սանտրը (սայրը)։ Տորբի վերևում կախված նիվնիվները (ճախարակները) ոտքերի շարժմանը զուգընթաց ծառայում են հենքի բերանի բացմանը։ Ասպաթները, տեղական բարբառով՝ բյուլյուներ, պատրաստված է լի-

թում տորքի երեք ձևերից ամենաընդհանրացածը, որը օգտագործվում էր հատկապես տարազի «կերպաս»-ը, Մանուսան, սպիտակեղենի կտավը գործելու համար, իսկ ուղղահայաց տորքը՝ կարպետ, գորգ և գորգային գործվածքով խուրջին, բարձի երես և այլն գործելու համար։

Ջուլհակության մեջ օգտագործված այդ երեք տիպի պարզունակ հաստոցները տարածված են եղել նաև համարյա ամբողջ Հայաստանում։ Այդ մասին 1909 թ. Թիֆլիսում տեղի ունեցած տնայնագործական համագումարի զեկուցագրում կարդում ենք. «Մինչև այժմ ես տեսել եմ միայն երեք ձևի գործիքներ։ Վանում, ուր այդ արհեստը շատ վաղուց ունի յուր նշանակությունը, իմ ժամանակ, այսինքն՝ մոտ 23 տարի առաջ, գեանափոր տորքերով գործում էին կտավ շալերը միայն։ Նույն ձևով ես այս տարի տեսա Փամբակի շրջանում, Համամլուում և Ղշլոզում»[7]։

Այդ տորքերից յուրաքանչյուրը ուներ իր օգտագործման տարբեր ձևը. օրինակ՝ հորիզոնական հաստոցի հորի վրա, եթե ջուլհակը իր ձեռներն ու ոտներն էր գործի դրնում, ապա ուղղահայացի և գետնագործի տորքի վրա՝ միայն ձեռները։ Ջուլհակի հորիզոնական հաստոցի (հորի) վրա աշխատելու ձևը գեռևս հին ժամանակներում ընդհանրացած է եղել նաև հայկական մյուս գավառներում։ Այդ մասին հետաքրքրական է այն տեղեկությունը, որը տեղ է գտել 15-րդ դարի մի ձեռագրում։ «Զոր օրինակ ոստայնանկ յորժամ ոստան հինէ, նախ չափէ զմի թելն և ապա հինէ. և ի գործելն ոսիւքն և ձեռօք վճարէ. թէ զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնին ոչ գիտելով, թէ զինչ գործեաց՝ մինչև վճարէ։ Եւ ի վճարելն հատանէ և ապա զարձեալ յետ տա ի սալմնէն, և կրկին չափէ, և տեսանէ զգործն թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն»[8]։

Գամիրքի գյուղերում. ինչպես ասվեց, գերիշխում էր բնափակ տնտեսության ձևը, և յուրաքանչյուր տնտեսություն, համաձայն իր նյութական կարողության, տեղական հաշակով բրդից. բամբակից պատրաստում էր իր տնտեսության համար անհրաժեշտ հագուստները, իրերը և առարկաները։ Իսկ հումքը վերամշակելու համար, ըստ ավանդական սովորության, գիմում էր հարևանների փոխօգնությանը։ Աշխատանքի այդ հավաքական ձևը Գամիրքում կոչվում էր սեճի (մեջի)։ Մեճիին մասնակցող անձերը իրենց աշխատանքի դիմաց դրամական վարձ չէին ստանում։ Դրանք սովորաբար լինում էին այդ գործի տիրոջ ազգականներն ու դրացիները, որոնք աշխատանքի ընթացքում գործի տիրոջ կողմից հյուրասիրվում էին նախաճաշով, ճաշով և ընթրիքով։ Հատուցումը կատարվում էր նույն կարգով՝ անհրաժեշտության դեպքում մեճիի մյուս մասնակիցներին փոխօգնության հասնելու ձևով։

Հումքի նախնական վերամշակման պրոցեսները՝ բրդի լվանալը, չորացնելը, զզելը, մանելը և ներկելը անցյալում, առավելապես, եղել են ձեռքի գործ և կատարվել են բացառապես կանանց կողմից։ Նախքան լվանալը, տան հարսները կամ չափահաս աղջիկները բրդի կանեբեր («յափագր») բաց անելով, փռում էին բակում կամ տանիքում, որպեսզի ոչխարի քրտինքից մասամբ թաղիքացած բրդերը ջրի մեջ հեշտ քրքրվեն, ապա առվի կամ աղբյուրի հոսուն ջրի տակ լավ թրջելուց հետո, փայտե թակերով բուրդը ծեծում էին մինչև փրփրելը։ Միևնույն գործողությունը մի քանի անգամ կրկնվելուց հետո, բուրդը ստոր ջրով պարզաջրվում, քամվում և ապա արևի տակ չորացվում էր։ Այնուհետև կատարվում էր բրդի զզումն ու սանրումը։ Ավելի տարեց, համեմատաբար հմուտ կանայք, բրդերը նախ մատներով զզում և ապա սանդերքով սանրում էին։ Բրդի սանրվածքից ստացվում էր երեք տեսակի հումք։ Առաջին բեռանը Գամիրքում կոչվում էր ծեր-բուրդ, երկրորդը՝ միջնեկ, երրորդը՝ օրձինք։ Ծեր-բուրդը օգտագործվում էր ընդհանրապես շալերի, գոտիների, գորգերի հենքաթելերի, միջնաթելերի համար, միջնեկը՝ հատկապես դուլպայի, ձեռնոցի, գլխանոցի, իսկ «օրձինքը»՝ ջեջիմի, թեթև-ջուլի և տան առօրյա այլ գործվածքների համար։

նում բամբակե թելից, հենքի թելերի քանակին համապատասխան։ Ջուլհակի գործիքներն են հանգիստանում մաՌՐ (մակույկ), մասուրան կամ մասրան, մրիրը կամ մրերը։ Իսկ որպես ոժանդակ աշխատանքներ՝ ճախարակը (չահրա), վիլահանը՝ կաժի պատրաստման համար, սանդերը, իլիկը (թեշի), բոմանը, առնոստիկը, կոճը։

[7] Տնայնագործական համագումար, Զեկուցագիր, Թիֆլիս, 1909, էջ 235։

[8] Հայկական ՍՍՀ Մատենադարանի ձեռագիր, N։ 1402 [Մատթեոս վարդապետի աշխատասիրեալ ի բնութիւն գործոց առաքելոց], էջ 64։

Ներկումը.—Տնայնագործները սովորաբար թելերը ներկում էին թոնրի կամ օջախի վրա։ Յուրաքանչյուր գույնի համար նրանք օգտագործում էին առանձին ներկատու բույսեր. այսպես, օրինակ՝ դեղինի համար նեռրիի (ալաժառի) հունդերը, կարմիրի համար՝ տորոնը, որ «քոք-պոյա» էր կոչվում, բորգոյի համար՝ սոխի կեղևը, սրճագույնի համար՝ ընկուզենու տերևը, ընկույզի կանաչ պատյանը։ Թելերը ներկում էին հետևյալ ձևով. օրինակ՝ կարմիր ներկելու համար տորոնի արմատները նախ շորացնում, փշրում և ապա թոնրի կամ օջախի վրա ներկվելիքի համար անհրաժեշտ չափով ջրի մեջ եռացնում էին այնքան ժամանակ, մինչև ներկանյութը իր գույնը ջրին տար. որից հետո կրաջրի կամ թանաջրի մեջ արծնված թելի կաժերը մխրճում էին եռացող ներկաջրի մեջ։ Երբ ջուրը սկսում էր վերստին եռալ, որպեսզի ջրի ամբողջ ներկն անցնի ներկելիքին, ճաշի մի զդալ կերակրի աղ կամ շիր լուծում էին կաթսայի մեջ և կաթսան կրակի վրայից ցած բերելով, թողնում, որ սառչի, ապա թելի կաժերը կաթսայից հանելով, թեթև քամում էին և ստվերոտ տեղ չորացնում։

Գորգագործություն.—Գամիրքի գյուղական վայրերում յուրաքանչյուր ընտանիքի մեջ հարսներից նա, ով արդեն փորձառություն ուներ, կատարում էր վարպետի գեր։ Նա, տան մյուս հարսներից կամ չափահաս աղջիկներից մեկի օգնությամբ, ըստ գորգի խտության չափերի, որոնք առանձին շրջաններում տարբեր էին լինում, նախ՝ պատրաստում էր գորգի ոստայնը (հինվածքը)։ Իր օգնականի հետ հաստոցի վրա հենելն ու ասպելը, շարք ընելը վերջացնելուց հետո, վարպետ գորգագործի առաջին գործն էր լինում գորգի բեռանի կտավի գործելը (տես գծագրությունները), որի լայնությունը, գորգի մեծության համեմատ, լինում է 2,5—3,5 սմ, որից հետո սկսվում էր խավ գործելը։ Այսպես, տնայնագործական պայմաններում, եթե անցյալում գորգը գործվում էր թելագրությամբ, ապա արհեստավորական շրջաններում պատրաստվում էր եթե ոչ գորգի տեխնիկական նկարը, գոնե գորգանկարի նախնական էսքիզը. այլապես հնարավոր չէր լինի պահպանել գորգի կոմպոզիցիայի համաչափությունը։

Տնայնագործ վարպետը մինչև 19-րդ դարի 50-ական թվ. «օրինակ» գորգը հակառակ երեսին դարձրած, մի առ մի թելագրում էր յուրաքանչյուր հանգույց իր գույնով։ Այսպես, «մեկ կանաչ, երկու դեղին, երեք պարապ, երկու կապույտ, երեք պարապին երեք կարմիր» և այլն։ Իսկ օգնականները (որոնք ընդհանրապես տան չափահաս և դեռատի աղջիկներն էին լինում) կապում էին հանգույցները ըստ տեղական սովորության։ Յուրաքանչյուր կարգի վարպետը քաշում էր միջնաթելը և կրտուտում այն, որպեսզի լավ նստի։ Սկրսնակները, ընդհանրապես, կապում էին գորգի տափի (ֆոնի) միագույն հանգույցները, իսկ որոշ հմտություն ունեցողները, ըստ օրինակ գորգի, ծաղիկներն էին բափում, այսինքն՝ գործում շրջագոտիների զարդանաշխները՝ ջրերը, որը Կեսարիայում՝ սուլար էր կոչվում, օձիկները (յրլան-էնիյի), անկյունների աստղածաղիկները, բլբուլները, բրերը և այլն։ Ինչ վերաբերում է գորգագործության մեջ գործածվող գործիքներին, ապա դրանք համարյա համանման էին տնայնագործ և արհեստավոր գորգագործի։ Կտուրը՝ Գամիրքի բարբառով՝ բերյիթը, մկրատը (մյրատ), փորը դանակը, սանտրը։

Կողովագործություն.— Տնայնագործական արհեստների մեջ Գամիրքում լայն տարածում ուներ նաև կողովագործությունը, թեև այն որպես պրոֆեսիոնալ արհեստ հանդիպում էր գլխավորապես բոշաների մեջ, այնուամենայնիվ, նահապետական ընտանիքի անդամներից մեկը տնտեսության պետերի համար փին-ուսիիզ, կնոջից պատրաստում էր հայի սելեներ, պտուղի կողովներ, իսկ բիրից՝ բլգնիզ (բլգրն), հարգի, գոմաղբի սեփեր-ներ (կողովներ), ինչպես նաև մեղվի փեթակներ։

Գամիրքի բոլոր մասերում, մինչև համաշխարհային առաջին պատերազմի նախորյակը, մեղվի շրջանակավոր արկղները դեռևս անծանոթ էին, ուստի և օգտագործվում էին բիրից կամ փին-ուսիից պատրաստված և թրիրով ծեփված կլոր փեթակներ, ինչպես Հայաստանի համարյա բոլոր գավառներում։

Փեթակը հյուսելու համար գետնի վրա դնվում էր մոտ 40 սանտիմետր տրամագծով մի շրջանակ, որի վրա բթամատի

հաստությամբ, որպես առեչ, խրում էին իրարից շորս մատ հեռավորությամբ, ներսի կողմը մի թիչ տաշված. ծառի ճյուղերը և ապա փիչոտու դալար, ակուն շիվերով, կամ



Նկ. 6. Գորգի հենքի և հանգույցի ձևերը։

լիքով հյուսում։ Կանայք կովի թրիքից նախօրոք պատրաստած շաղախով, որի մեջ խառնված էր լինում խայծդան (ղաբրան) և թոնրի փուշի, ներսից, դրսից հավասար ծեփելով, արդեն դաարաստի կողովը շորացնում էին ոչ շատ արևոտ մի տեղ։

Կավագործություն.—Գամիրքում տնայնագործական արհեստների մեջ որոշ տեղ էր գրավում նաև կավագործությունը։ Գյուղական ընտանիքներում որոշ փորձառություն ունեցող կանայք անցյալում պատրաստում էին իրենց տնտեսության համար անհրաժեշտ կավե իրեր՝ ամաններ. ընդեղենների համար կավե փեթակներ՝ ամբարներ՝ և հատկապես թոնիր։

Օրինակ. թոնրի պատրաստության համար ընդհանրապես օգտագործվում էր կարմիր կավահողը, որը նախ մանրացվում էր. թրջելուց հետո խառնում էին քիչ քանակությամբ հարդի մրեղ և տավարի կու և ապա ոտքերով շաղախում և թողնում մի քանի օր, «թթվելու» համար։ Որպեսզի թոնիրը չճաքճքի, խառնում էին նաև կանեփի թել և այծի մազ։ Այսպես պատրաստված կա-

[6] Կավե ամբարների լայն գործածությունը հայտնի էր հատկապես Կեսարիայի շրջանի Թաշխան գյուղում, այդ ամբարն ուներ մոտ 2 մետր բարձրություն. մեկից մեկուկես մետր լայնություն։

վացեխից, ըստ թոնրի մեծության, նախ պատրաստում էին 5—7 ցեխագնդեր. իսկ յուրաքանչյուր ցեխագունդ մինչև գործածությունը, հղկված, առանց մազի մորթի









Նկ. 7. Գորգագործության և ոլորակության գործիքներ։

մեջ ոտքով վերստին տրորում և այդ գնդից պատրաստում առնվազն ութ մատ լայնությամբ մի օղակի կիսալուսնաձև երկու թևվեր (զոլերը), իրար վրա նստեցնում և մատներով միացնում, թակում էին մինչև որ անհետանային միացման կետերը։ Այսպես, օրական մի օղակ և հետևեալ 6—7 օղակները և ընդարձակ իրար վրա նստեցնելով, պատրաստվում էր թոնիրը[10]։ Թոնրի պատրաստելու ծեփային կոչված այս հնամենի եղանակը՝ մինչև վերջ էլ Գամիրքի գյուղերում դեռևս կանանց կողմից կիրառվում էր՝ ցորենի կավե քառանկյուն ամբարների, փենթակների պատրաստության ժամանակ։ Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ծեփային եղանակով հնարավոր չէր լինում կավե ամաններին ցանկացած ներքուստ ապակ, ինչպես բրուտի դուրգով՝ հախարակով։ Ուստի և Հալիսի ստորին հովտում կավե ամանները ձեռք էին բեր-

[10] Թոնիրը մոտ 1 մետր 20սմ. բարձրություն և մեկ մետր տրամագիծ ունեցող տակառաձև կավե մի վենթակ է, որի ներքևի մասը, ինչպես ասում էին Գամիրքում, 3 ոտք մեկ ուղանգի տրամագիծ, իսկ վերի մասը՝ 2 ոտք մեկ ուղանգի՝ մոտ 75 սմ տրամագիծ ուներ։

[11] Տե՛ս Խ. Սամվելյան. Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1911. հատ. 2, էջ 125։

վում ուրումտիկինցի բրուտներից, նույն կավե ամանի տարողության չափ ցորենի հետ փոխանակելով։ Այս տեսակետից հատկանշական է, որ շատ հին ժամանակներում, դեռևս նախքան մեր թվականությունը երկրորդ հազարամյակի կեսերին, խեթերի ժամանակ, Յոզգաթի նույն շրջանում ամանեղենի պատրաստման աշխատավարձը հատուցվում էր բնավճարով, ըստ իրի ծանրության և տեսակի։ Օրինակ, մեկ մնաս բաշ ունեցող պղնձե սկուտեղ պատրաստելու համար երկաթագործին (այդ ժամանակաշրջանում դեռևս տրհնստների մեջ ստորարաժանում տեղի չէր ունեցել), որպես աշխատավարձ վճարվում էր մեկ պա դարի, իսկ երկու մնաս բաշ ունեցող սկուտեղի համար վճարվում էր մեկ պա ցորեն[12]։

Յոզգաթի շրջանի Ուրումտիկին հայկական գյուղի բնակիչները գլխավորապես զբաղվում էին բրուտությամբ։ Նրանց պատրաստած հատկապես ներսից կանաչ ջնարակված ջրի սափորները (հատկապես դեղի ներսի մասը), կուժերը (բոտում, կալկուլա, ջուրմիչները, պուտուկները ներկիր կոչված թանի ամանները Կեսարիայի շրջանում մեծ համբավ էին վայելում։ Ուրումտիկինցի բրուտների պատրաստած ջրի սափորները՝ մեծ ընդունելություն էին գրանում ոչ միայն իրենց ճաշակավոր, սլացիկ ձևի համար, այլև այդ շրջանի կավահողի ծակոտկենության շնորհիվ՝ ջուրը շողիացնող հատկությամբ։ Այդ իսկ պատճառով Ուրումտիկինի սափորների ջուրը, նույնիսկ ամռան խիստ շոգերին միշտ զով էր մնում։

19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, առևտրական հարաբերությունների զարգացման հետևանքով, Գամիրքի գյուղերում նույնպես սկսել էին մուտք գործել պղնձե ամանները, որոնք տակավ առ տակավ զուրս էին մղում կավեղենը։ Իսկ քաղաքատիպ մեծ ավաններում և քաղաքներում արհեստա-առևտրական դասի տնտեսություններում դեռ շատ վաղուց ամանեղենը համարյա ամբողջությամբ պղնձյա էր։

Այստեղ մեր նպատակից դուրս է Գամիրքում գոյություն ունեցող բոլոր արհեստների մասին խոսելը, ուստի և համառոտ քննության կառնենք այն արհեստները միայն, որոնք տեղական կարևորության պատճառով իրենց գոյությունը պահպանում էին թե գյուղերում և թե քաղաքներում։ Այսպես, օրինակ, սայլագործությունը, երկաթագործությունը, ջուլհակությունը, գորգագործությունը, թեև քաղաքներում վաղուց պրոֆեսիոնալ արհեստի բնույթ էին ստացել, բայց Գամիրքի գյուղական վայրերում անփոփոխ պահպանում էին իրենց գոյությունը, հատկապես երկաթագործությունը հեռավոր գյուղերում դեռևս ուրույն արհեստի բնույթ չէր ստացել, այլ կիրառվում էր նաև փոխօգնության ձևով։ Այսպես, հայկական Զաթ գյուղը, որը գտնվում էր հենց Ագ-դաղի անտառի ծոցում, ուր կային 3 համայնական դարբնոցներ, որոնց գոնները միշտ բաց էին, գյուղացիներից մեկը, երբ տրորի խոփը, կամ երկաթե մի կոտրած իր դողել տալու դեպք դդար, իր հետ տանում էր մաշված, կամ կոտրած առարկան և ածուխ, իսկ երկաթագործը, հաճախորդի օգնությամբ կատարում էր աշխատանքը, որի համար, փոխօգնության կարգով, նա հատուցում էր մի ուրիշ աշխատանքով։

Նախքան այդ արհեստների մեջ աշխատանքի բաժանման հանգեպ դալու մասնագիտացման, աշխատանոցի անձնակազմի, արտադրանքի, արտադրամիջոցների, ինչպես և համբարական որոշ սովորությունների մասին խոսելը, հակիրճ ձևով անհրաժեշտ ենք գտնում բնության առնելու նրանց բնույթը։ Արհեստագործողները բաժանված էին երեք կարգի՝ ա) այն, որ, ինչպես հայկական մյուս դավառներում, նույնպես և Գամիրքի գյուղական վայրերում նահապետական զերդաստանի անդամները, ըստ ավանդական սովորության, տղամարդ կամ կին կատարում էին տնտեսության անհրաժեշտ աշխատանքը, օրինակ, որոշ փորձ ձեռք բերած տղամարդը նորոգում էր սայլը, լուծը, կամները, դրաստների համետը (փայտե), պախուրցը, պատրաստում կրկլայներ և այլն։ Իսկ կանայը, ընդհանրապես, գործում էին տնտեսությանն անհրաժեշտ կտավը, պատրաստում հագուստ և դանազան իրեր՝ կապերտ, գորգ, խուրջին, բարձի երես և այլն։ բ) սակավահող կամ հողազուրկ գյուղացիներն իրենց տրն-

[12] Code Hittite, par Hrozny. Paris, 1922, էջ 160, 161։

4—696

տեսության համար, որպես օժանդակ միջոց, զբաղվում էին սայլագործությամբ, ոլորակությամբ, սակայն ի տարբերություն քաղաքի նույն արհեստների, աշխատում էին բացառապես պատվիրատուի հումքով։ Մինչդեռ քաղաքում հյուսնատաղձագործը, կառագործը, երկաթագործը իր միջոցներով և հումքով ապրանք էր հայթայթում շուկայի համար։ Այնուամենայնիվ, ի բացառություն այն հյուսնատաղձագործ, սայլագործ արհեստավորների, որոնք գտնվելով անտառամերձ գյուղերում, տեղական նյութական բազայի հնարավորությունից ելնելով, ուղղակի շուկայի համար ապրանք էին արտադրում, ինչպես բաղարում համանման արհեստներով զբաղվողները։ Այսպես, օրինակ, Ագ-գաղի հայկական Ջաթ գյուղի բնա-







Նկ. 8. Տնային գործածության իրեր։ 1—5. կանթեղներ՝ ստեփանական զարդացմամբ։ 6—7. ջուր խմելու ամաններ (6 ջամ, 7 ջուրխմիչ), 8. սապլր, 9. կաթսա, 10. հարանի, 11. յուղի բդուկ։

կիլների մի որոշ մասը, որպես հյուսն-ատաղձագործ, սայլագործ, մայրի (շամ) ծառից պատրաստում էին սայլի հին ձևի «կույր» անիվ, կամն, խնոցի, փոցխ, կաղ-

նազան գործիքներ, հոսելի, մեծ հոսելի (ատղու), երկու մատ (եղան), երեք մատ (անատոտ), ինչպես նաև կամն։ Մինչդեռ դաշտային շրջանների անտառազուրկ գյու-



Նկ. 9. տնային գործածության ամաններ։ 1. գաղյում, 2. փայտե փարչ, 3. սրճաղաց, 4. ոնհեն կափարիչով, 5. սնհեն ունկավոր, 6. ապուրի թաս, (զարրուս-թաս), 7. խոշաֆի դույլ (փարխաչ)։

նու փայտից՝ սռնի (մազի), իսկ Սեբաստիա քաղաքի հյուսն-ատաղձագործները՝ հաճարի փայտից՝ գյուղատնտեսական դա-

ղերում համանման արհեստավորները բացառապես պատվիրատուի հումքով պատրաստում էին սայլեր, արոր, լուծ և այլն։

Այստեղ ուշադրության է արժանի այն, որ գյուղական «տնայնագործ»-ները և քաղաքի պրոֆեսիոնալ արհեստավորները թեև աշխատում էին շատ չնչին տարբերություն ունեցող ձեռքի համանման գործիքներով և գործիք մեքենաներով, այնուամենայնիվ, քաղաքային արհեստանոցներում աշխատանքի կազմակերպումը մանուֆակտուրայի նախնական որոշ ձև էր ստացել։ Օրինակ, գյուղական սայլագործը, եթե սայլի «կույր» անիվի փայտային մասը ինքն էր պատրաստում՝ իրար ագուցված երեք կտոր փայտից, ապա պատվիրատուն դիմում էր երկաթագործին անիվի երկաթե շրջանակը՝ շինան[13] հագցնելու։ Այստեղ, ինչպես երևվում է, պատվիրատուն է որ գործը կազմակերպում է տարբեր արհեստավորների դիմելով, մինչդեռ քաղաքային կառագործը, իր արհեստանոցում տարբեր մասնագիտացած արհեստավորների միջոցով գլուխ էր բերում գործը և պատրաստի հանձնում հաճախորդին։

Կառագործների արտադրական կենցաղը.—Սեբաստիայում համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, գոյություն ուներ 12 կառագործ-դարբին, 12 հյուսն կառագործ, որոնք եթե արհեստանոցի ներքին սարքավորման, գործիքների սեփականատերն էին հանդիսանում, ապա արհեստանոցի շենքը վարձակալում էին։ Կառագործական արհեստանոցները, ընդհանրապես, տեղադրված էին իջևանների—խանների մեջ և կամ դրանց մոտակա փողոցներում։ Այդ արհեստանոցները՝ լինի կառագործի դարբնոցը, լինի հյուսն-կառագործի աշխատանոցը, ունեին ոչ նվազ, քան 30 fn. մետր և ոչ ավելի, քան 50 fn. մետր մի տարածություն և իրենց յուրահատուկ գործիքները։ Օրինակ, կառագործի գործիքները եղել են դեզգյահը՝ հաստոցը, որը դրված էր աշխատանոցի մեջտեղում և ներկայացնում էր 1,20 սմ. երկարությամբ, 70 սմ. բարձրությամբ և նույնքան լայնությամբ մի կոճղ, դրա վրա ամրացված էր մեծ ու փոքր զնդանը (որս, սալ), կողերում ըստ հարմարության, կախված կամ լրված էին զանազան գործիքներ՝ մուրճ, աքցան, ունելի և այլն։ Հաստոցի գլխի կողմը հաստատված էր օջախը, որի ետևի մասում կամ վերում կախված էր երկթևանի, կամ մի թևանի փուքսը։ Փայտե առանձին մի դազգահի վրա ամրացված էր մամուլը («մենկենե»), ինչպես նաև դարբնոցի մի անկյունում՝ մայրի (Համի) փայտե ածուխի արկղը։

Կառագործության մեջ, լինի հյուսն-կառագործը, լինի կառագործ դարբինը, այսինքն՝ կառքերի երկաթի մասերով զբաղվողները ունեին իրենց առանձին աշխատանոցները համարյա համանման անձնակազմով։ Օրինակ, կառագործական դարբնոցի անձնակազմը, ընդհանրապես բաղկացած էր լինում 2—4—7 հոգուց. վարպետ, որ գործի տերն էր, մի ենթավարպետ («դալֆա»), երկու աշակերտ, մեկը՝ ենթավարպետի օգնական, մուրճ զարնող («չեքիչճի»), իսկ մյուսը՝ փուքս քաշող («քորյուքճի»)։ Ըստ ավանդական սովորության, երբ հայրը ներկայացնում էր իր 14—16 տարեկան որդուն վարպետին, ընդունված էր ասել. Վարպետ, աղաս ճանձնում եմ քեզ, արհեստը սովորեցուր, միսը քեզ, ոսկորը ինձ։

Աշկերտը առաջին տարին կամ առաջին վեց ամիսներին, ըստ ընդունակության, եթե փուքս է քաշում, ապա որոշ աշխատանքներ[14] է կատարում նաև վարպետի տնտեսության մեջ։ Առաջին տարին քանի դեռ փուքս էր քաշում, որպես աշխատավարձ տարեկան ստանում էր մեկ ոսկի, բացի այդ, օրական ստանում էր նաև մեկ ղրուշ (40 փարա) օրվա ճաշի համար, իսկ շաբաթ օրը՝ երկու ղրուշ, մեկը որպես օրվա աշխատավարձը, մյուսը՝ կիրակի օրվա համար ծախսելու փող («խարշլըխ»)։ Երկրորդ տարին սկսում էր մուրճ զարնել—ենթավարպետի օգնականի աստիճանին բարձրանալով, տարեկան ստանում էր երկու ոսկի, իսկ երրորդ տարին նա արդեն համարվում էր ենթավարպետ, ստանում էր տարեկան երեք ոսկի, ինչպես աշկերտը,

[13] Շինան 1,5—2 սմ. հաստությամբ, 5—6 սմ. լայնությամբ երկաթե մի շրջանակ, որը տաքացնելով անցկացնում են անիվի վրա։

[14] Աշկերտի կատարած աշխատանքը կայանում էր հետևյալում. Ջատկի և Ծնունդի տոնական օրերին վարպետի հյուրերին էր սպասարկում, նրանց առաջ բաց էր անում դուռը, ընդունում վերնահագուստը, սուրճ, ըմպելիք (խմիչք) հրամցնում, շուկայից գնված սննդամթերքները վարպետի տուն փոխադրում և այլն։

նույնպես և ենթավարպետը, բացի տարեկան աշխատավարձից, ստանում էր օրական մեկ ղրուշ, որպես օրապահիկ։

Կառագործության յուրաքանչյուր մասի՝ փայտի, երկաթի, ներկի համար կային առանձին արհեստանոցներ։ Սակայն, նկատելի էր, որ Սեբաստիայում գոյություն ունեցող 12 արհեստանոցներից երկուսը հանդիսանում էին և փայտի, և երկաթի մասերը պատրաստող միացյալ գործատուն, մի տեսակ մանուֆակտուրա, որտեղ դեռևս բացակայում էր ներկի բաժինը։ Այսպիսով, առաջացել էին արհեստանոցներ, որոնք պատրաստում էին նորը պատվերի կամ որպես պատրաստի ապրանք՝ վաճառքի համար։ Կառագործ դարբինները և հյուսն, կառագործները զբաղվում էին ոչ միայն իրենց մասնագիտական օբյեկտի հատուկ մասերի նորոգությամբ, այլև ներքին համաձայնությամբ, պատրաստում էին նույնպես նորը՝ պատվերով կամ որպես պատրաստի ապրանք, վաճառքի համար։

Այնուամենայնիվ, կառագործական արհեստանոցները բաժանված էին ոչ միայն ըստ նյութի՝ փայտի, երկաթի, ներկի գործով զբաղվողների, այլ նաև ըստ կառքի տեսակի։ Օրինակ, կային կառագործներ, որոնք մասնագիտացած էին ձիու հատուկ բեռնատար չորս անիվանի կառքերի՝ վուրդունի (ֆուրգոն) պատրաստությամբ, իսկ մյուսները՝ մարդատար՝ ֆայթոն, fյուբա, կամ լանդոն և յայիլ հարմար ու թեթևաշարժ կառքերի գործում։

Պետք է նշել, սակայն, որ Սեբաստիայում, Կեսարիայում ընդհանրապես օգտագործվում էր «յայլին», որը ուներ իր պատճառները։ «Յայլին», այսինքն՝ «ճոճանակավորը» ոչ նվազ հանգստավետ է, քան «ֆայթոն-ը» կամ «լանդոն-ը» և՛ համարյա կիսով չափ էժան։ Հասարակ «յայլին» եթե արժեր 8—10 օսմանյան ոսկի, ապա ավելի զարդարվածը՝ 12—15 ոսկի։ Մինչդեռ «ֆայթոնը» 25—30 ոսկի, իսկ «լանդոն-ը»՝ 35—40 ոսկի։ Այս պայմաններում բնական է, որ մեկ քաղաքից մյուսը կամ քաղաքի ներսը, հասարակության սպասարկության համար, իր հարմարությամբ և մատչելիությամբ ամենահարմարը «յայլին» էր։ Քանի-գեռ Փոքր Ասիայի արևելյան մասում երկաթգիծ չկար (մինչև 1924 թ.) մարդկանց փոխադրության համար «յայլի»-ի պահանջը մեծ էր։ Շուկայի պահանջը մղում էր տվել կառագործներին, կառքի այդ տեսակի արտադրության մեջ մասնագիտանալու, ինչպես նաև փայտի և երկաթի բաժինների միավորմանը մի գործատեղում, թեև չնչին տոկոս կազմող մարդկանցով, սակայն սկիզբ էր առել մի տեսակ նախնական մանուֆակտուրա։ Հետևաբար, իրենց գոյությանն սպառնացող վտանգի առաջ կառագործները ներքին համքարական համաձայնության էին եկել։ Նորը շինելու համար, երբ պատվեր էր սաացվում, հանձնակատար վարպետը, մյուս մասնագիտացած արհեստանոցների աջակցությամբ, գլուխ էր բերում գործը։ Բայց այստեղ նկատելի է այն պարագան, որ համարյա միշտ նորի պատվեր ստացողը կառագործ-դարբինն էր. այսպիսով, այս վերջինը հյուսն-կառագործի և կառք ներկողի հանդեպ վերադաս մի դիրք էր ապահովել։

Հանձնակատար կառագործ դարբինը, յայլի-ի փայտե մասերի համար հյուսն-կառագործին վճարում էր երկու օսմանյան ոսկի, ներկողին՝ մեկ ոսկի, դոշեմեճի-ին, ներսի և դրսի հարմարանքի համար (նյութը և աշխատանքը միասին) վճարում էր մոտ երկու ոսկի, զսպանակը և առանցքը՝ սոնին[15] (յայը և դինգիլը) արժեր մեկուկես ոսկի։ Այսպիսով, բոլոր ծախսերը հաշված, ինչպես և իր աշխատանքը և նյութը միասին, «յայլին» արժեր 8—9 ոսկի։ Այս պայմաններում յուրաքանչյուր գործարք հանձնակատարին ապահովում էր 2,5—3 ոսկի հավելյալ շահ։

Այս հանգամանքից օգտվելով, որոշ կառագործ դարբիններ, իրենց գործառնությունները լայնացրած, սկսում են ոչ միայն տեղական պատվերի վրա աշխատել, այլև միջգավառային ներքին շուկայի համար։ Հետևաբար, Սեբաստիայում պատրաստված կառքերը վաճառվում էին Խարբերդի և Մալաթիայի և այլ շուկաներում։ Այսպիսով, փոքր մասշտաբով արտադրողը միաժամանակ հանդես էր գալիս իր տեղական շուկայից դուրս, միջգավառային շուկայի համար ապրանք արտադրողի դերում։ Այս փոքր արդյունաբերողները, նոր սաղմ-

[15] Կառքի զսպանակները թվով չորսն են, և սոնին (յայը և դիֆկիլ), որ ներմուծվում էր Եվրոպայից։

նավորվող գործարանային արդյունաբերությանը դիմադրում էին միասնաբար համագործակցելով, իրար հանդեպ ցուցաբերելով որոշ զիջումներ։

Ժամանակավոր համագործակցությունը տեղի էր ունենում նաև կառագործ դարբիններին միջև զնդանի պատրաստման ժամանակ։ Ինչպես հայտնի է, ընդհանրապես գործիքները, հատկապես մեծ զնդանը ստացվում էր Եվրոպայից, գլխավորապես Գերմանիայից և արժեր երեք ոսկի։ Դա մի ենթավարպետի ամբողջ տարվա աշխատավարձն էր։ Հետևաբար, խնայողության համար փոխօգնության կարգով պատրաստում էին զնդանը։ Այդ աշխատանքը կատարվում էր աշխատանոցից դուրս՝ բացօթյա, որտեղ պատրաստվում էր երկու փուքսանի մի օջախ, ինչպես նաև դեղդյահը, բոլոր անհրաժեշտ գործիքներով։ Գործը վարում էին երկու վարպետ, չորս Մուրճ զարնող (հերթափոխությամբ ութ հոգի), երկու փուքս քաշող (հերթափոխությամբ՝ չորս)։ Այսպիսով, 14 մարդ երկու օրվա ընթացքում պատրաստում էր զնդանը։ Բացի վարպետներից, մուրճ զարնողները և փուքս քաշողները վճարվում էին կրկնակի օրականով, այսինքն՝ երկուական ղրուշ և ճաշ։ Մինչդեռ վարպետները փոխհատուցվում էին փոխօգնության կարգով համանման մի աշխատանքի ընթացքում։

Այստեղ ակնհայտ է քաղաքային արհեստավորների համքարական պայքարը ինչպես նոր սաղմնավորվող արդյունաբերության ճնշման, նույնպես և Եվրոպայից ներմուծվող գործարանային արտադրության դեմ։

Սեբաստիայում գրեթե բոլոր արհեստավորները, այդ թվում և կառագործները ունեին իրենց համքարությունը, որը թեև ոչ գրավոր, բայց ղեկավարվում էր սովորութական իրավունքի հիման վրա, լուծում արհեստավորների միջև ծագած ներքին վեճերը ու ենթավարպետին վարպետի կոչում տալու հարցը։ Այս վերջինը, թեկուզ և ձևականորեն, պահպանվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը։

Համքարությունն ուներ իր վարչական մարմինը, որը բաղկացած էր 3—5 մարդուց, ըստ տվյալ արհեստավորների քանակի, առանց ազգային խտրության։ Օրինակ, Սեբաստիա քաղաքում կառագործների համքարության վարչությունը՝ «էրքանը»[16] բաղկացած էր 4 հոգուց, որից երեքը՝ հայ, մեկը՝ թուրք։ Նրանք ընտրվում էին արհեստավոր վարպետների հավաքում, մինչև նրանց ակտիվ շրջանը, այսինքն՝ քանի դեռ կարողանում էին աշխատել։

Այստեղ, որպես օրինակ, կնշենք Սեբաստիայում կառագործ վարպետի կոչում տալու արարողությունը, որը լրիվ գաղափար կտա այդ շրջանի արհեստավորների աշխարհայացքի, համքարական իրավունքների մասին։

Վարպետացուն իր արհեստանոցի սարքավորումը պատրաստելուց հետո, «էրքանը»՝ համքարության վարչական կազմը, սովորեցնող վարպետը, վարպետացուի հայրը, բարեկամների և համքարության անդամների ընկերակցությամբ գնում են աշխատանոցի դուռը։ «էրքանի» անդամներից ամենատարեցը «Սուրբ աստված ճշմարիտ» ասելով, բաց է անում արհեստանոցի դուռը։

Սովորեցնող վարպետը նույնպես «Սուրբ աստված ճշմարիտ» կրկնելով, զնդանի վրա մատաղ է անում մի աքաղաղ, նրա արյունով խաչի նշան է անում. զնդանի վրա, նրա կողերին. նույնպես և արհեստանոցի դռան վերին շեմին, ապա պատրաստելով քուրան, կրակը վառում և իր տեղը զիջելով իր երբեմնի աշկերտին, ասում է՝ «Շինիր կառքի այսինչ մասը»։ Նա երկաթը քուրայում տաքացնելուց հետո, կռանին մի քանի սիմվոլիկ հարվածներ տալով, մեկ կողմ է դնում։ Վարպետը համբուրելով իր աշկերտի ճակատը, խորհուրդ է տալիս «Բարեխիղճ լինել, մաքուր աշխատել և իր վարպետին ամոթով չթողնել»։ Աշկերտը նրա ձեռքը համբուրելով, պատասխանում է. «Շնորհակալ եմ քեզանից, որ ինձ արհեստ սովորեցրիր, բարեխիղճ կլինեմ, մաքուր կաշխատեմ, քեզ ամոթով չեմ թողնի»։ Ներկաները շնորհավորելով, օրհ են խմում վարպետի հաջողության համար։ Ներկաները այդ առթիվ տեղում հյուրասիրվում են խորովածով և մրգերով։

Գամիրքում լայն տարածում գտած ըզբաղմունքներից անհրաժեշտ է քննություն

[16] «էրքան» («ռուքն» արաբերեն բառի հոգնակին) նշանակում է «սյուներ», հիմք, այսինքն՝ համքարության սյուները, հիմքը։

առարկա դարձնել նաև երկու գլխավոր արհեստներ՝ ջուլհակությունը և գորգագործությունը։ Այդ արհեստները թեև քաղաքներում վաղուց պրոֆեսիոնալ բնույթ էին ստացել և արտադրում էին շուկայի համար, սակայն գյուղերում, ինչպես ասվեց, բացի իրենց տնտեսության կարիքների համար աշխատող տնայնագործներից, կային նաև ջուլհակներ, գորգագործներ, որոնք ի տարբերություն քաղաքի արհեստավորների, պատվիրատուի հումքով մանում. կամ գործում էին պատվիրատուի համար։ Օրինակ, էվերեկ ավանում ամեն տնտեսություն ուներ իր ճախարակը, որով մանում էր վաճառականի բամբակը, մեկ կգ մանած թելի համար ստանալով մեկուկես կգ բամբակ, մեկ կգ-ից ավելացած թելը մանողի վարձատրությունն էր կազմում[17]։ Քաղաքի արհեստավորները իրենց միջոցներով և գնած հումքով ապրանք էին արտադրում շուկայի համար։ Մինչդեռ 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած, քաղաքային արհեստավորներից հատկապես ջուլհակները առևտրական կապիտալից կախման մեջ ընկնելով, այսինքն՝ դադարելով ուղղակի սպառողի հետ գործ ունենալուց, աշխատում էին միջնորդների, առևտրականների պատվերով։ Այդ մասին կարդում ենք Գ. Սրվանձտյանցի «Թորոս աղբար» բովանդակալից աշխատության մեջ. «Արաբկիրի մեջ.—գրում է նա.—առաջին համարված էր մանուսա գործել, հազար վեցհարյուր (1600) հոր կը բաներ, իմ հոն եղած օրերը (1878 թ. հուլիս ամիս) բանթող ըրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելու առիթով, գործողները երգմամբ կապված էին իրարու, մինչև իրենց ուզած գինը տրվեր, անեծք և տուգանք սպառնացած իրենց ուխտէն բաժնվողին»[18]։ Այդ վկայում է այն մասին, որ մանուսագործությունը Արաբկիրում լավ էր կազմակերպված։ Վարպետ գործատերերը, որոնք միաժամանակ իրենց արտադրության վաճառքով էին զբաղվում, ոչ միայն մանած թելը բերել էին տալիս Մանչեստրից, Իտալիայից, այլև Թուրքիայի ներքին գավառների գլխավոր քաղաքներում՝ Սեբաստիա, Մուշ, Կարին, Տրապիզոն, Սամսոն, Խարբերդ, Գաստեմունի, Հալեպ և այլուր հաստատել էին իրենց գործակալությունները, որոնց միջոցով ըստպառում էին արտադրված մանուսան։ Սպառման շուկայի այդպիսի կազմակերպումը իր հերթին մեծ զարկ էր տվել Արաբկիրի մանուսագործությանը։ Թուրքիայի ղանաղան քաղաքներում հաստատված գործակալությունները, ըստ տեղական շուկայի ճաշակի ու պահանջի, պատվերներ էին տալիս գործատերերին։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Արաբկիրում պատրաստվում էր կրկնակի լայնությամբ մի տեսակ գործվածք, որը կոչվում էր մանուսա. 40—50 սմ լայնությամբ այդ մանուսան հատկապես կանանց հագուստի համար ծանոթ էր ավելի քան 40 ծաղկավոր և զանազան դույնի օրինակներով[19]։ Ահա դրանցից մի

---

[17] Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Գահիրե, 1935, էջ 60։

[18] Գ. Սրվանձտեանց, Թորոս Աղբար, Ա. մաս. Կ. Պոլիս, 1878, էջ 281։ Արաբկիրում ջուլհակների գործադուլի պատճառը հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի խոսք ասել թղթադրամով վճարումի մերժման մասին։ Թուրքիան Ղրիմի պատերազմի (1853—1856 թթ.) հետևանքով ծանր պարտքի տակ էր ընկել։ Անգլիական և ֆրանսիական կապիտալիստները Թուրքիան իրենց տնտեսական ոլորտի մեջ առնելու համար մեծ դրամագլուխներ էին ներդրել Թուրքիայի տնտեսության մեջ։ Թուրքիան իր պարտքերին դիմագրավելու համար ոսկեդրամը, արծաթադրամը ներքին շուկայից քաշել և շրջանառության մեջ դրել էր «ղայմե» կոչված թղթադրամը, որը իր քանակությամբ գերազանցել էր ներքին շուկայի պահանջները, ուստի և արժեզրկվել էր, հասցնելով ինֆլացիայի։ «Ղայմե»-ն դրամաշրջանառության մեջ նորմալ ընթացք չուներ, որից առաջին հերթին տուժում էին աշխատավորները, այդ թվում և ջուլհակները։ Ուստի Արաբկիրում արհեստավոր ջուլհակները գործադուլ էին հայտարարել «ղայմե»-ով վարձատրվելու դեմ։ Այստեղ հիշատակության է արժանի նաև այն, որ Կեսարիայի շրջանի Էվերեկ մեծ ավանում հայոց եկեղեցին իր եկամուտներից չզրկվելու համար Կ. Պոլսում տպել է տալիս 5, 10, 20 և 40 փարանոց տոմսեր (ղայմե) միայն եկեղեցում գործածվելու համար, սակայն հրապարակում մանր դրամ չլինելու հետևանքով, հայերը այդ տոմսերը 3 տարի (1878—1881 թթ.) գործ են ածում նաև շուկայում։ Նույնիսկ թուրքերը ընդունում էին, քանի որ եկեղեցին արծաթ դրամով փոխանակում էր այդ իր թղթե տոմսերը*։

* Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Գահիրե, 1935, էջ 78—79։

[19] Տե՛ս «Ոսկեգետակ», տարեգիրք, հրատարակություն Արաբկիրի և շրջակայի հայրենակցական միության, Բեյրութ, 1945, էջ 95։

քանիսի անունները՝ սաթոանն, «լայն ծաղիկ», «ղալ ծաղիկ», «բագեմ ծաղիկ», «փեռուր ծաղիկ», «չանախ-ծաղիկ», ճիճանյանի, փափուր-յոլի (երկաթուղի), խուրշիդի, կերմեսուտ, փոթիկավոր կամ փոթիկլու, մկնատամ կամ տիշլու (ատամնավոր), մարթոն, քարթոն, ալմադի, մուճլիզ, մեքրապի, արաբ աստաղի (արարի շրթունք), ճիլալի (մահիկաձև), Սեբաստիա տեսկսի, կովատուն էրենկի (Կովտուն օրինակ) Բրգնիք էրենկի, չիչակլի տոխում (ծաղկավոր գործվածք) և այլն։

Մանուսայի այդ անունները, որպես զարդամոտիվ ստեղծվել են գլխավորապես օգտագործված այն ծաղիկների անուններից, որոնք տարածված են հատկապես Արարկիրի շրջանում, կամ այդ զարդանախշերի ուրիշ մի իրի, առարկայի հետ ունեցած նմանությունից։ Չի բացառվում, եթե ասենք, թե դրանք կապված են նաև որոշ լեգենդների հետ։ Ինչպես տեսանք, կան նաև ուրիշ շրջաններից ընդօրինակություններ, որոնք պատրաստվել են այդ շրջաններում սպառման նպատակով։

Մի քանի խոսք էլ մանուսայի զարդանախշման մասին։ Չպետք է ենթադրել, թե նախշազարդ մանուսան ստեղծվեց ժակվար գործող մեքենայի (19-րդ դարի 80-ական թվականներին) Փոքր Ասիա ներմուծումից հետո միայն, այլ այն գործվում էր հորի վրա հորիզոնական տորքով կամ պեդալավոր՝ ոտքով շարժման մեջ դրվող տորքով, դեռևս միջնադարում։ Օրինակ, մարթոն կոչված մանուսայի օրինակը գործվում էր յոթ—ինը—տասնմեկ ոտավոր (ոտքով շարժվող) տորքով, ինչպես նաև զարդանախշումը կատարվում էր նաև հին դաջման մեթոդով։

Արաբկիրում, բացի հագուստի համար պատրաստված «նեղ շախով» մանուսայից, գործվում էր նաև անկողնի, բազմոցների համար 1—1/2—2 մետր լայնությամբ ծաղկավոր նաշխազարդ լայն մանուսա, որոնք 19-րդ դարի 70-ական թվականներին, ըստ Սրվանձտյանի, մրցում էին Հալեպի և Դամասկոսի (Շամի) ապրանքների հետ[20], թեև Արաբկիրում մանուսագործությունը մինչև 20-րդ դարի սկզբները դեռևս գործարանային բնույթ չէր ստացել, այսինքն՝ «տնայնագործական» վիճակում էր գտնվում։ Յուրաքանչյուր մանուսագործ-արհեստավոր իր ջուլհակի հին հաստոցով կամ «քարտոնով» («ժակվար» գործող մեքենայի տեղական մի վոքր տեսակը, որ արհեստավորների կողմից «քարտոն» էր կոչվում) գործում էր վարպետի (դործատերի) հաշվին։ Սակայն, 20-րդ դարի սկզբներին մանուսայի տեղական արդյունագործությունը սկսել էր որոշ տագնապ ապրել[21]։ Դրա գլխավոր պատճառը եվրոպական ապրանքների մրցակցությունն էր, ապա գործատերերի կողմից նվազեցված աշխատավարձը հաշվի չառնելով, այլևս աշխատավորների որակի տարբերությունը։

Գամիրքում հյուսվածեղենի արդյունագործության գլխավոր կենտրոններից մեկն էր նաև Կյուրինը, ուր զարկ էին ստացել արտադրության այն ճյուղերը, որոնք տրվյալ շրջանում բարենպաստ պայմաններ ունեին։ Օրինակ, Կյուրինը իր աշխարհագրական դիրքով ամենահարմար վայրն էր բրդի և մետաքսի հյուսվածեղենի արդյունագործության զարգացման համար, որովհետև մի կողմից լեռնային արոտավայրերը իրենց բուսականությամբ շատ նպաստավոր պայմաններ են ստեղծում հատկապես ոչխարաբուծության համար, մյուս կողմից քամիներից պաշտպանված նրա բարեխառն հովիտները, առատ ջրերով, ամեն հարմարություն ընծայում էին այգեգործության համար, ուր ծիրանին, խնձորենին և թթենին լավ էին աճում և նպաստավոր բազա ստեղծում վերամշակելու, արդյունագործելու համար։

Կյուրինում հյուսվածեղենի համար անհրաժեշտ հումք հանդիսացող բրդի որոշ մասը հայթայթվում էր տեղական խաշնարածներից, իսկ մեծ մասը ստացվում էր Սուրիայի քուրդ թաճիրների—վաճառականների կողմից։ Նրանք ամեն ամառ իրենց մսացու ոչխարի հոտերը պարարտացնելու համար Կյուրինի մերձակա Կովաելի լեռան արոտավայրերը յայլա էին բերում և, նախ-

[20] Գ. Սրվանձտեանց, Թորոս աղբար, Ա. մաս, Կ. Պոլիս, 1879, էջ 286։

[21] Մանուսայի թոփի (8—10 արշին) գործելը արժեր մեկից մինչև երկու և կես ղրուշ։ 1906 թ. լորս հարյուր վարպետներ («ղալֆաս») գործազուրկ էին արել, բայց լավ չկազմակերպված լինելու պատճառով մեկուկես ամիս հետո ստիպված են լինում վերսկսել աշխատանքը։



Եռագույն չանախ
փաղիկ

Դալ ծաղիկ

Հասարակ ատամ-
նավոր «փաչեն»

Փնտուր ծաղիկ
փոքրիկավոր

Էայն ծաղիկ



Օղակավոր
փոքրիկլու

Օղակավոր
փոքրիկլու

Մկնատամնավոր հասարակ



Փոքրիկավոր դոքմելի

Մկնատամնավոր
հասարակ

Ատամնավոր
սաթրանջ

Փոթիկավոր սաթրանց
դոքմելի

Սաթրանջ
ատամնավոր

Ատամնավոր
(դիզլու)
փոթիկավոր

Պատեմ
ծաղիկ

Գոտեներ
հիմքերով

Գոտեներ
հիմքերով

Գոտեներ
հիմքերով

Լայն ծաղիկ
«չիթարի»

Կյուրինի
շալ

Հայն
«տոխամաս»
ներքնակի երես

քան մեծ բաղաքների՝ Կեսարիայի, Իզմիրի շուկաները քշելը, ոչխարները խուզում էին և հավաքած բուրգը, փոխադրության գրժվարության պատճառով, ստիպված էին լինում հենց տեղում վաճառել։ Այսպիսով,



Նկ. 10. տեղական «ձագարի» (ժնկվար) նմուշ, «վարպետ Վարդան Ատենիկյանի սարքածը»։

դեռ հին ժամանակներից Կյուրինի բնակլիմայական պայմանները նստիագրյալներ էին ստեղծել ջուլհակության զարգացման համար։ Չնայած հումքի այդպիսի առատությանը, այնուամենայնիվ, Կյուրինի շալագործ արհեստավորների «տնայնագործական» ձևը, իր նախնական տեխնիկայով, չէր կարողանում Թուրքիայի ղանաղան գավառներում լայն սպառում ունեցող շալեղենի արտադրությունը բարձրացնել, դրանով իսկ, օբյեկտիվորեն, տնտեսապես քայքայվող սակավահող գյուղացիների համար վարձու աշխատանք ապահովել։ Այդ իսկ պատճառով Կյուրինի աշխատավորության մի ստվար մասը տառապում էր առանց աշխատանքի։ Նրանք սեպտեմբերից գնում էին դաշտային Կիլիկիա, հատկապես Ադանա, բամբակի դաշտերում աշխատելու, կամ՝ Սյուրիա (Ամբիա) մատուտակի (փտյամ-քոբյու) քաղցր արմատ փորելու համար։ Սրանք մարտ ամսի վերջերին միայն, շոգերին չդիմանալով, վերադառնում էին իրենց տները։ Երկու ամիս իրենց տնտեսությունում՝ այգիներում զբաղվելուց հետո, մայիսի կեսերից մինչև օգոստոսի կեսերը գնում էին-դեպի Կյուրինի արևելյան շրջանը՝ գազի (փշոտ բույս) խեժ հավաքելու[22]։

Շալագործության նախնական տեխնի-

---

22 Այդ բույսը (Թուրք. ղեվեն-քեվեն) Թանկագին խեժ է պարունակում, որը Թուրքերեն Տիբրեն է կոչվում, Դամիրքի որոշ շրջաններում գազի խեժին փյուս էին կոչում, որ հայերեն՝ գազի իոկական անվան աղավաղված ձևն է (Ղարարազի բարբառում՝ վես, հոս), լատ. astragalus, որ տալիս է Zragabatha-tragant կամեղր-խեժը։

Դամիրքում Ղեվեն—գազը աճում է Աղ-տաղից (Սպիտակ-սար) մինչև Կյուրինի արևելյան շրջանի բլուրները հատկապես Ճալիկանցոց-յուրտի մոտերքը, Գոչու, Գավար, Գարա տորախ, Քեվենլի-տերե և այլ վայրերում, ինչպես նաև Կյուրինի լեռներից մինչև Արգեոսի փեշերը՝ Թոմարզայի շրջակայքը, հատկապես Ջոմախլու, Ինան-սու գյուղերում, որտեղ գազերի արտը այդու նման խնամում էին։

Գազի մի քանի տեսակներ կան գետնին կպած և ամրածված, գետնից 30—50 սանտիմետր բարձր, որը սև մի խոշոր կծկված ոզնու ձև ունի։ Ժողովուրդը նրա տարբեր ձևերից և հատկություններից ելնելով՝ ավել է նրան ղանազան անուններ, օրինակ՝ գնդակազ, նզաճ, կոչա, ուռի, յոտաճ, չափլա կազ և այլն։

Խեժի (քիթրեի) հավաքումը տեղի էր ունենում երեք ամսվա ընթացքում, սակավահող այր գյուղացիները աշխատում էին խմբերով և կամ իրենց ընտանիքի անդամների հետ։ Խմբերից ոմանք փորում էին բույսերի բոլորտիքը, առանց սակայն արմատը քանդելու, ուրիշները՝ ինչ ղանակ էին գտնում,

կայի աստիճանական զարգացման և բուսական ներկերի օգտագործման հետևանքով, ինչպես նաև 19-րդ դարի վերջերից Ֆրանսիայից «ժակվարդ» կամ, ինչպես տեղում ասում էին՝ ճակատ գործող մեքենայի ներմուծմամբ, շալագործությունը Կյուրինում մեծ զարկ է ստանում։ Շալագործհաստոցների ընդհանուր թիվը, համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, Կյուրինում հասնում էր 3500-ի։ Շալի արտադրության զարգացման հետ բարձրանում էր նաև Կյուրինի շալի որակը, շուկայից վանելով պարսկական շալը։ Այդ շալը մեծ համբավ էր վայելում ինչպես Թուրքիայի ներքին շուկայում, նույնպես և Եգիպտոսում, Բուլղարիայում։

Կյուրինում արտադրվում էին շալի մի քանի տեսակներ՝ Լաֆարի (Լահորի), Բաաեմի, ինչպես նաև՝ Խելոք էմուլ հնարած Զուբուխլու կամ կոկոզուկ և Անեմ շալի օրինակները։ Բացի շալից, Կյուրինում արտադրվում էր նաև կերպասեղեն[23] (շայախ), նախշազարդ ծածկոցներ, վարագույրներ, բարձի երեսներ։ Համաձայն Սեբաստիայի ֆրանսիական հյուպատոսի տեղակալի 1911 թ. տեղեկագրի, Կյուրինում հյուսվածեղենի տարեկան արտադրությունը հասնում էր երեք միլիոն ոսկի ֆրանկի կամ վեց հարյուր հազար դոլլարի[24]։ Այդ նշանակում է, որ սպառման շուկայի լայնացմանը զուգահեռ, աշխատող ձեռքի կարիք էր զգացվում, որով սակավահող գյուղացիության մեծ մասն ընդգրկվում էր տեղական արդյունագործության մեջ։

Այսպես, ուրեմն, Կյուրինի շալագործ արհեստավորները թեև վաղուց ի վեր շուկայի համար ապրանք էին արտադրում, սակայն շալագործության նախնական տեխնիկան հնարավորություն չէր տալիս ոչ շուկայի պահանջը գոհացնելու և ոչ էլ տեղի ազատ աշխատավորության մեծ մասին գործ հայթայթելու։ Այդ հնարավոր եղավ հատկապես ժակվարի ներմուծումով, ինչպես նաև մեծ մասամբ շալագործության հին տեխնիկայի բարելավման շնորհիվ, որին իրենց ավանդ էին բերում Կյուրինի հնարամիտ արհեստավորները։ Օրինակ, շալագործ Կարապետ Մինասյանը, որին ասում էին Խելոք-էմի, շալը տորքի վրա լայն սանդրով գործելու և հենքի ուղած մասի բերանը քաշող լարերով[25] բանալու իր նորաձևությամբ սկիզբ էր դրել, եթե այսպես կարելի է ասել, շալագործության մեքենայացման առաջին քայլին։ Մինչ այդ շալը թեև վաղուց ի վեր հորով էր գործվում, բայց մինչև Խելոք-էմու գյուտարարությունն ու նորարարությունը շալը համարյա ձեռքի գործ էր, նախշերը կատարվում էին ձեռքով։ Այնուամենայնիվ, մինչև 19-րդ դարի 70-ական թվականները շալագործությունը Կյուրինում մնում էր իր տնայնագործական վիճակում, այսինքն՝ շալագործ արհեստավորն իր ընտանիքի անդամների հետ հումքը պատրաստում, ներկում, շալի օրինակը հանում, գործում և վաճառում էր ուղղակի սպառողին։ Այդ հանգամանքն իր արտացոլումն է գտել արհեստավորի, հենց իր՝ Խելոք-էմու հորինած և իր գործած շալին նվիրած երգ-ոտանավորի մեջ.

Թոմպուլին աղջիկն է մաներ[26],
Խելոքը օրնակն է հաներ,
Աման մը անուշ կերեր,
Շալն առեր շարշուն տարեր։
Հայ ու Թուրքն սեյիրն է հաներ,
Շալ է գործեր, շալ է գործեր,
Էս ինչ գեվյուր մալ է գործեր,

այսինքն՝ գազի բնի վերից սկսած երեք կարգի վրա կտրվածքներ բանալով, ստացվում էր առաջին, երկրորդ և երրորդ կարգի խեժ։ Եթե եղանակը չոր լիներ, խմբի յուրաքանչյուր մարդ միջին հաշվով սեզոնին 5—7, մինչև 9 լիտր խեժ կարող էր հավաքել, իսկ թե անձրևոտ լիներ, բնից արտածորված խեժերը հալվում փչանում էին և «քիթրեա» հավաքողները ձեռնունայն վերադառնում էին տուն։

Գազի խեժի լիտրը, այսինքն՝ վեց օխան կամ ութը կգ, ըստ տեսակի, արժեր 100—150 ղրուշ, որը գործ էր ածվում հյուսվածեղենի սլոյացման, ներկերի, շրեշների պատրաստման և այլ նպատակների համար։

[23] Տեղական բրդե կերպասը (ինչպես տեղում ասում էին շալ կտորին), որ 58 սմ լայնություն ուներ, մետրը արժեր 18—18 ղրուշ, բամբակից և բրդից խառն գործվածքը՝ 12—13, իսկ մանուսայի 5—7 մետր երկարությամբ կտորը՝ 12—25 ղրուշ։

[24] Տե՛ս «Ալիս», օրգան Սեբաստիո Վերաշինաց Միության, Նյու-Յորք, 1930—1931 թ., հոկտ.—նոյ.—դեկտ. միացյալ համարը, էջ 18—19։

[25] «Քաշող լարերը» արհեստագործական շրջանում կոչվում են չեֆենեֆ, որոնք լինում են 5—7 հատ։

[26] Խոսքը իր կնոջ մասին է, այսինքն՝ Թոմպուլին աղջիկը, որ մանել է։

Հայն ու Թուրքը սեյիրն հաներ։
Խորաթեցեք տեներ, տեներ,
Խելոքըն է հյուներ հաներ.
Ալ է գործեր, շալ է գործեր
Էս ինչ աղվոր մալ է գործեր[27]։

Նաշխազարդ շալագործությունը, որ ջուլհակության պարզ արհեստից կիրառական արվեստի մի նոր ճյուղի վերածվելու հետ է կապված, սկսում է որոշ աշխուժություն ցույց տալ Կյուրինում։ Գործվում են ոչ միայն հրապարակի վրա ծանոթ շալերի օրինակները՝ Լաեռի, Անեմի, Պաանմի և այլն, այլ Կյուրինը, հանձին իր հմուտ շալագործների, հատկապես Կարապետ Մինասյանի, ունենում է իր չուբուխլու շալը, որի կատարելագործվածը հետագայում կոչվում է կոկոզուկ շալ։ Կյուրինի շալագործության համբավի հետ միասին մեծանում է նաև շալագործ վարպետների միջև մրցակցությունը։ 19-րդ դարի 80-ական թվականներին Կյուրինում կար Ղլճանենց Սեքո էմին, որը նույնպես ճանաչված շալագործ վարպետ էր, Խելոք-էմու կողմից չուբուխլուն հրապարակ հանվելուց մի քանի օր հետո, Սեքո էմին իր անունից հրապարակ է հանում մի նոր չուբուխլու և լուր տարածում, որ իբր թե Խելոքը գողացել է իր «օրինակը»։ Խելոք-էմին բողոք ներկայացնելով աղաներին, պատիվ է պահանջում և ականատեսներով հաստատել է տալիս, որ Սեքո էմին գործատնի երդիկից գաղտագողի դիտելով, ընդօրինակել է Խելոքի չուբուխլուն, բայց զգուշավորության համար շալի մի գիծը (չուբուխ) տարբեր գույնով գործելով է հրապարակ հանել։ Այդ առթիվ Խելոքը հորինում է մի ոտանավոր, որտեղ իր արտահայտությունն է գտել արհեստագործական շրջանների մրցակցությունը։ Այստեղ պետք է նշել, որ կապիտալիստական հարաբերությունները, գործի գաղտնիքը պահելու տեսակետից, ֆեոդալական հարաբերություններից ոչնչով չէին տարբերվում։

Կյուրինի առևտրական բուրժուազիան դեռ 19-րդ դարի 80-ական թվականներին ձեռնամուխ լինելով շալի արդյունագործությանը, տեղական շալագործությունը, կերպասագործությունը 19-րդ դարի վերջին դուրս է բերում տնայնագործական շրջանակներից։ Այդ գործին զարկ տվողներից առաջինը լինում է Մահտեսի Սարդիս Մինասյանը, որ Մանչեստրից բերել է տալիս բրդի լարանը, բամբակի մանածը, ինչպես նաև Ֆրանսիայից ժակվար[28] (տեղական բարբառով՝ ճակառ) գործող մեքենաներ, նույնիսկ իր նկարով ապրանքային պիտակ է ստեղծում։ Այսպիսով, Կյուրինի համբավավոր շալը Թուրքիայի հրապարակից կարողանում է արտամղել պարսկական շալը, սակայն պետք է նշել, որ կերպասագործության ասպարեզում իր նախնական տեխնիկայով չի կարողանում մրցել եվրոպականի հետ։

Մինասյանին հետևում են Զոքկարյանը, Զուլճյանը, Գարայանը, Ղրլբաշյանը, Չերչիյանը և ուրիշներ, որոնք կառուցում են իրենց սեփական ներկատները։ Տեղի է ու-



Նկ. 11. Ապրանքային պիտակ Կյուրինից (19-րդ դարի 80-ական թվականներ)։ Նկարում՝ մահտեսի Սարտի Մինասյանը։

[27] «Կիւրինի Յուշ», Նյու-Յորք, Ա, Տարի, թիվ 3, էջ 89։

[28] Ֆրանսիայի Լիոն քաղաքից մեքենագործ Ժոզեֆ Մարի Ժակուարը 1800 թ. հնարում է գործող մեքենան, որը իր անունով կոչվում է ժակվար։

ննում աշխատանքային պրոցեսների բաժանում, ուստի, ինչպես և անցյալում, շալագործ վարպետը այլևս ամբողջ աշխատանքը ինքը չէր կատարում, այլ հանդես են գալիս հենք պատրաստողներ՝ հենողներ, ներկողներ, գործողներ և արդուկողներ։ Ինչպես արտադրության միջոցները, նույնպես և հումքը կենտրոնանում են գործատեր վաճառականների՝. աղաների ձեռքը։ Յուրաքանչյուր աղա ուներ իրեն կցված շալագործները, որոնք աղայի ժակվար մեքենայով և հումքով գործում էին շալը և շաբաթվա վերջը հանձնում աղային։ Աշխատանքը վճարվում էր ըստ շալի տեսակի և որակի, հատը 2—5 ղրուշ։

Այսպիսով, Կյուրինի հայ առևտրական բուրժուազիան 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, զարկ տալով շալագործության արդյունագործությանը, իր տնտեսական ազդեցության տակ է առնում նախկին շալագործ արհեստավորներին, բայց ոչ բոլորին։ Դեռևս կային շալագործ արհեստավորներ, որոնք իրենց արտադրության միջոցի տերն էին, այսինքն՝ ունեին մեկ, երկու ժակվար, ուստի և հնարավորություն ունեին ավելի հեշտությամբ աղա վոխելու[29], քան նրանք, ովքեր արաագրամիջոցներից զուրկ, արդեն դարձել էին շալագործ բանվորներ։ 20-րդ դարի սկզբներին, երբ արդեն ժակվարի տեղական օրինակների պատրաստությամբ գործող մեքենաները ավելի ձեռնտու են դառնում[30], շալի արտադրության մեջ առաջանում է նաև գործատերի հանձնակատարի դերը կատարողների պահանջ։ Այս վերջիններն այլևս շալագործությամբ չէին զբաղվում, այլ առնում էին աղայից պատրաստի հումքը, պատրաստում գործվելիք շալերի «ծաղկավոր օրինակները»՝ խավաքարտեր (քարտոն) և իրենց ժակվար-ով գործել էին տալիս շալագործ բանվորներին։ Այսպիսով, շալագործ բանվորն իր աշխատավարձը ստանում էր գործատերի հանձնակատարից, անշուշտ, ավելի պակաս, քան ինքը՝ գործատերն էր վճարում յուրաքանչյուր շալին։ Այս պայմաններում շալագործության մեջ ոչ միայն աշխատանքի բաժանում էր կատարվել ըստ աշխատարար պրոցեսների, այլև առաջացել էին նոր արտադրահարաբերություններ։

Այս բոլորից ելնելով, պետք է նշել, որ տեղական արդյունագործության մեջ (Կյուրինում՝ շալի, Արարկիրում՝ մանուսայի, Թոմարզայում՝ շալվարագործության) թեև տեղի էին ունեցել աշխատանքի բաժանում և տեխնիկական որոշ փոփոխություններ, այնուամենայնիվ, մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը, բառիս նեղ իմաստով, դեռևս գործարանային կյանք չէր ստեղծվել[31]։ Բանվորների համատեղ աշխատանքը մասամբ կիրառվում էր Կեսարիայում՝ յազմաճիության և Սեբաստիայում՝ գորգագործության բնագավառում։ Սակայն, արտադրող արհեստավորը արդեն դարձել էր տնայնագործ բանվոր։

Գամիրքում հայերի հին զբաղմունքներից մեկը հանդիսացել է նաև գորգագործությունը, բայց և այնպես եղել է մի ժամանակ, որ ստեղծված քաղաքական որոշ աննպաստ պայմանների հետևանքով, այդ արհեստը հայերի մեջ իր ընդհանրական բնույթը կորցնելով, դիտվել է որպես քրդերի և ավշարների արհեստ։ Այդ սխալ կարծիքը իր արտահայտությունն է գտել նույնիսկ 19-րդ դարի պատմագրության մեջ։ Այդ հարցը թեև գորգագործության պատմությանն է վերաբերում, այնուամենայնիվ, ավելորդ չի լինի, եթե մի փոքր պատմական ակնարկով կանգ առնենք այդ թյուրիմացության պարզաբանման վրա։

Գորգագործությունը միջնադարում հայերի գլխավոր զբաղմունքներից մեկն է եղել։ Վենետիկցի նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոյի (XIII դ.) վկայությամբ «Թուրքմենիայի գլխավոր քաղաքներում (Իկոնիա, Կեսարիա և Սեբաստիա) հայերը և հույները գործում էին աշխարհի ամենա-

[29] «Աղա փոխել» նշանակում է գործատերի որոշ անհամաձայնության դեպքում մի ուրիշին դիմել։

[30] Կյուրինի արհեստավորները, ինչպես նաև Սեբաստիայի երկաթագործները մեծ հմտությամբ պատրաստում էին փայտից, հատկապես տանձենու, և երկաթից տեղական ժակվարներ, որոնց հատն արժենում էր 7—11-ի փոխարեն 3—5 ոսկի։ Առաջին վարպետները եղան Սիմոն Ճղլյանը, Կարապետ Ափանյանը, Վարդան Ճանճիկյանը և ուրիշներ։

[31] Թոմարզայում տարեց այր մարդիկ շալվարի համար քառմանով բուրդ էին մանում։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ շալվարագործությունը այդտեղ պրոֆեսիոնալ արհեստի բնույթ էր ստացել։

գեղեցիկ գորգերը»[32]։ Սակայն հետագայում պարսկական, թուրքական տիրապետության դաժան հարկահանությունների ու հատկապես Գամիրքում ջալալիների ասպատակությունների, ավերածությունների հետևանքով, սկսվում է քայքայվել, ինչպես քայքայվել էին քաղաքային մյուս արհեստները։ Այնուամենայնիվ, գյուղական վայրերում յուրաքանչյուր տնտեսություն ըստ իր նյութական կարողության, իր ընտանեկան պետքերի համար գործում էր գորգ, կապերտ, ջեջիմ և այլն։ Այդ մասին «Գորգագործությունը Հայաստանում» մեր աշխատության մեջ պատմական փաստացի նյութի հիման վրա խոսվում է Հայաստանի գավառների և այդ թվում նաև Գամիրքի գորգագործության մասին։

Այսպիսով, հաստատվում է, որ Գամիրքում հայերը դեռևս 13-րդ դարում, արդեն ծանոթ էին գորգագործությանը։ Գորգագործության արագ տարածումը 19-րդ դարի վերջերին Գամիրքում, եթե մասամբ կարելի է վերագրել արդեն հայերի գորգագործության ծանոթ լինելու հանգամանքին ապա դա կապված է. հատկապես առևտրական հարաբերությունների զարգացման հետ։

Այսպես, 1897—1898 թվականներին Կեսարիայում և իր շրջակայքում կային երկու հազար[33] գորգի տորքեր։ Այդ քանակի մոտ մեկ քառորդը կենտրոնացված էր 15 հայ վաճառականների ձեռքում, իսկ մնացած 1500 հատը՝ անհատների։ Իսկ 1901—1902 թթ. այդ թիվը բարձրանում է 5000-ի[34], որի երկու հազարը Կեսարիայի շրջակայքում։ Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին (1914 թ.) տորքերի քանակը Կեսարիայից մինչև Սեբաստիա հասնում էր մոտ տասը հազարի, որի երկու երրորդը գտնվում էր Կեմերեկից Կեսարիա, իսկ մեկ երրորդը՝ Կեմերեկից Սեբաստիա։ Միայն Կեմերեկում կար մոտ 750, որից 150-ը նրա շրջակայքում՝ Տենտել, Պուրհան, Թեքմեն, Գարակյոլ հայկական գյուղերում։

Այստեղ տեղին է մի համեմատություն անցկացնել ջուլհակության և գորգագործության միջև։ Գորգագործությունը թեև Գամիրքում պրոֆեսիոնալ արհեստի բնույթ էր ստացել. ավելի ուշ, քան ջուլհակությունը, բայց այն ավելի կարճ ժամանակամիջոցում մեծ տարածում է ստանում, քան ջուլհակությունը. անշուշտ, այդ չի կարելի վերագրել միայն հայերի գորգագործության արհեստին ծանոթ լինելու հանգամանքին։ Ինչպես ասվեց, կային և ուրիշ տնտեսական ազդակներ. ա) Գամիրքում պատրաստված գորգերի շուկայի ոլորտն ավելի ընդարձակ էր, քան Գամիրքի հյուսվածքեղենի շուկան, բ) մեքենայացումը գորգագործության մեջ այն արդյունքը չտվեց, ինչ որ տվավ, հյուսվածքեղենի արդյունաբերության մեջ, որով ձեռագործ գորգի արդյունագործությունը ոչ ինդուստրիալ Թուրքիայում ավելի ծավալվեց, քան Գամիրքում կտավի արտադրությունը, Թուրքիան հովանավորող կապիտալիստական երկրներում հյուսվածեղենի արտադրության մեքենայացման պատճառով, կարճ ժամանակում քայքայվեց, գ) գորգի տորքերը իրենց արժեքով, պարզությամբ և փոխադրության դյուրությամբ ավելի մատչելի էին աշխատավորական խավերին, քան ջուլհակի հաստոցը կամ ժակվարը, որը արժեր շուրջ 5 օսմանյան ոսկի, դ) գորգագործության տեխնիկան հնարավորություն էր տալիս իր մեջ ընդգրկել երեխաներին, կանանց, ինչպես նաև քաղաքների ու գյուղերի արհեստավորներին, մանր առևտրականներին, իսկ ջուլհակությունը. մինչև 1915 թ. մնաց գյուղերում, որպես միայն չափահաս կանանց զբաղմունք։

Այնուամենայնիվ, նկատելի է այն, որ գորգագործությունը Գամիրքի բոլոր մասերում. միաժամանակ չի ստացել պրոֆեսիոնալ արհեստի բնույթ, ուստի և բոլոր շրջանները միաժամանակ չեն շուկայի համար ապրանք արտադրել։ Օրինակ, Կեսարիան իր շրջակայքով մինչև Կեմերեկ համեմատաբար ավելի վաղ էր սկսել ապրանք արտադրել, քան Սեբաստիան և իր շրջանները։ 19-րդ դարի 90-ական թվականներին Կեսարիայում և նրա շրջակայքում արդեն կային 15 հայ գործատերեր և անհատ գորգագործներ, որոնք երկու հազար տորքերով տարեկան օգտագործում էին հինգ հազար

---

[32] Марко Поло, Путешествие, Ленинград 1940, էջ 17—18։

[33] Ե. Երկաթյան, Բիւլանդիոն, 1898, № 638։

[34] Տեվելյան, «Մանզումա» թերթ, № 320։

Նկ. 12. 20-րդ դարի սկզբների Կեսարիայում գործված մետաքսե օրինակ գորգ, որի վրա պատկերված է փոքրասիական 12 գորգի նմուշ։

կգ. մետաքս և քսան հազար կգ չլվացված բուրդ[35], ընդամենը արտադրվում էր երեք հազար գորգ։ Հինգ տարի հետո, 1902 թ. արդեն արտադրվում էր տասը հազար գորգ[36], որի կեսից ավելին, եթե տների մեջ էր գործվում ի հաշիվ գործարանատերերի, ապա մնացած մասը գործվում էր մանր արհեստանոցներում[37]։ Այդ մասին 1906 թ. Կ. Տևելյանը գրում է. «Գորգը Կեսարիա վաճառականության ամենեն մեծ նյութն էր»[38]։ (Տես Կեսարիայում գործված գորգերի նմուշ գորգը)։

Աշխատավարձի պայմանները—Գամիրքում աշխատավարձը, նայած տեղական պայմաններին և ժամանակին, տարբեր է եղել։ Օրինակ, մինչև 19-րդ դարի 90-ական թվականները աշխատավարձը նույնը չի եղել Կեսարիայում և իր շրջակայքում, ինչ որ եղել է նույն ժամանակներում Սեբաստիայում և իր շրջակայքում, որովհետև Կեսարիան, հին ժամանակներից ի վեր գտնվելով գլխավոր ճանապարհի խաչմերուկում, ավելի զարկ է տվել ընդհանրապես արհեստներին և, մասնավորապես, առևտրին, այդ թվում և՛ գորգագործության, և՛ գորգի առևտրին։ Կեսարիայում և նրա շրջակայքում հարյուր հենքով գորգի մեկ կարգը, այլ խոսքով՝ հարյուր հանգույց գործելը արժենում էր մեկուկես փարա[3]։ Հետևաբար, 600 հենքնոց գորգի մեկ կարգը՝ 9 փարա։ Վարպետ գորգագործը իր աշկերտների հետ, եթե օրական 20—30 կարգ գործեր, միջին հաշվով կստանար 6 ղրուշ, պայմանով, որ իր 6—8 տարեկան փոքրիկ օգնականներին (1—3 հոգի) շաբաթական վճարեր 1—10 ղրուշ։ Վարպետը իր աղջիկներից յուրաքանչյուրին, եթե օրական վճարեր կես ղրուշ կամ 20 փարա, դեռևս իրեն մնում էր 4—5 ղրուշ, որ այդ ժամանակներում բավականին եկամուտ էր նույնիսկ բազմանդամ ընտանիքի համար։ Այդ այդպես էր, քանի դեռ մրցակցությունը մզվում էր տեղական մանր արդյունաբերողների միջև։ Սակայն, երբ անգլիական կապիտալով Զմյուռնիայում (Իզմիր), Կեսարիայում, Սեբաստիայում (Սվազ) հիմնվեցին գորգի «Օրիենթալ կարպետի մենիֆեկչեր» և «Գրիֆիտ» շահակցական մեծ ընկերությունները և նրանց մասնաճյուղերը տարածվեցին Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր քաղաքներում, այդ ժամանակ աշխատավարձերը կողմնակի միջոցներով, ինչպես Կեսարիայում, նույնպես և Սեբաստիայում սկսում են կրճատվել։ Այդ բանը արտահայտվում է չափահասի և անչափահասի նույն աշխատանքի համար տարբեր վճարման մեջ, երեկոյան աշխատանքի համար բանվորի կողմից լապտերի և հետևաբար նավթի հայթայթման, ինչպես նաև աշկերտների շահագործման և այլնի մեջ։ Ֆրանսիական փոխ-հյուպատոս Տյուսարը, խոսելով Սեբաստիայի գորգագործության մասին, 1911 թվականի իր հաղորդագրության մեջ գրում է, որ ձեռքի աշխատանքն ավելի էժան է, մի բանվորուհին օրական գործում է 3—4000 հանգույց (իլմիկ) և 10—12 ժամ աշխատելով, ստանում է 15—80 սմ, օրական առավելն 30 փարայից մինչև 4 ղրուշ։ Եզրակացնելով, նա ասում է. «Եթե ֆրանսիական մի ընկերություն կազմվի, համոզված եմ, որ այդ վարպետ գործավորուհիները շուտով աչքի պիտի ընկնեն և ընկերությունը մենաշնորհ պիտի անե գորգագործությունը և տնտեսական խոշոր շահեր պիտի ունենա, գորգի արտադրությունը Սեբաստիայում և շրջակայքում տարեկան մոտավորապես հասնում է քսան հազար քառ. մետրի կամ 190 հազար քառ. ոտքի[39]։

Մի ուրիշ փաստաթղթի մեջ Սեբաստիայի (և շրջակայքի) գորգի գործարանը և աշխատավարձի դրությունը հետևյալ ձևով է նկարագրված, «Դավրան գտնվում է Սեբաստիայի հյուսիս-արևմտյան կողմը, մոտ կես ժամ հեռավորությամբ..... «Շարք» ընկերությունը, որի կենտրոնատեղին Իզմիր է, այստեղ էլ ունի իր գործարանը։ Գործարան ասվածը մի քանի վերին աստիճանի անմաքուր, վատառողջ, խոնավ սենյակների պատերի երկայնությամբ գըր-

---

[35] «Բիւզանդիոն», № 472։ (Մետաքսը ստացվում էր Պրուսիայից, օխան = 130—150 ղրուշ, բուրդը Կյուրինից՝ մեկ լիտր, մանած բուրդը՝ արժեր 120 ղրուշ, ներկը դեռ բուսական էր)։

[36] Անդ, № 1619։

[37] Անդ, № 331։

[38] Տե՛ս. «Սուրհանդակ», 1906, № 3160։

[39] «Ալիս» ամսաթերթ, 1930 թ. հոկտ. նոյ. դեկտ.։ (Գորգի ցաքակոսի արշինը տեղում արժեր 25 ֆր., իսկ Եվրոպայում՝ 50—60 ֆր.)։

ված տախտակների վրա, հենածների առաջ նստած են հարյուր հոգու չափ փոքրիկ աղջիկներ 6—7 տարեկան, նիհար, դեղնած, թոշնած, որոնց վրա մանկական զվարթության նշույլն անգամ չկա... մազերը գզրզված, ցնցոտիների մեջ, ոտաբոբիկ, բուրդից գոյացած փոշու մառախուղի մեջ նստած և նրանք մեջքերը ծռած այդտեղ պիտի աշխատին ոչ նվազ քան 16—17 ժամ։

Դա աշխատանքի ժամերն են։ Դրա մեջ չեն մտնում հանգստյան, նախաճաշի մի քանի վայրկյանները, և ինչ են ստանում նրանք, ոչ ավելի քան 20 փարա։ Առավոտյան լուսադեմին, դեռ հազիվ մութը փարատած՝ նրանք «գործարան» են մտնում և այնտեղ մնում մինչև ուշ երեկոն...: Բայց չկարծեք, թե իրենց «ավուրշեք» 20-փարան «արդարությամբ» են ստանում։ ...Հարկահավաքը եկել է, վաշխառուն դուռն է կըարել, հորը դրամ պետք է։ Հայրը դիմում է գործարանատիրոջը։ Սա որպես բարեգործություն, ճարահատ հորը մեկ ոսկի կանխավ է տալիս, և բավարարված հոր 6—7 տարեկան երեխան մի ամբողջ տարի պիտի աշխատի, որ փոխառու հոր այդ դրամը վճարված համարվի։ Այդ դրության մեջ գտնվող 15 փոքրիկ գերի աղջիկներ ցույց տվեցին մեզ։

12—17 տարեկան աղջիկներ էլ շատկան, փոշելից այդ միջավայրում նրանք էլ օրական գործում են 16—17 ժամ և ի՞նչ ստանում, ոչ ավելի քան 1,5 ղրուշ։

Խեղճ երեխաները հինգ հազար հանգույց պիտի զարնեն (առաջ 6000 է եղել), որ ստանան մեկ ղրուշ։ Իսկ 6—7 տարեկան աղջիկը հազիվ երկու օրվան այդ 5000 հանգույցները զարկել կարողանա։

«Շարք» ընկերությունը տարին միջին հաշվով դավրացիներին որպես աշխատավարձ 350 ոսկի տալով, տասնյակ հազար ոսկիներ է, որ շահում է խեղճ երեխաների և պառավ կանանց աշխատանքի արդյունքից[40]։

Անշուշտ, տեղական մանր արդյունաբերողը չպիտի կարողանար մրցել օտարերկրյա արդյունաբերական մեծ ձեռնարկների հետ, քանի որ նրանք գորգի հումքը, մանածը, քիմիական ներկը ավելի էժան էին ձեռք բերում, քան տեղական մանր գործատերերը։ Ուստի և, 20-րդ դարի սկզբներին, Եվրոպական կապիտալիստական ընկերությունների կողմից Փոքր Ասիայում գորգագործարանների հաստատումով ավելի է խորանում պայքարը գորգի տեղական մանր արդյունագործողների և այդ օտար ընկերությունների միջև։ Մյուս կողմից, ավելի ուժեղանում է բանվորների, այդ թվում նաև գորգագործ բանվորուհիների շահագործումը։ Սակայն հատկանշական է, որ տեղական մանր արդյունագործողները, իրենց համքարային կազմակերպությունների շնորհիվ, եթե կարողանում էին որոշ դիմադրություն ցույց տալ եվրոպական շահակցական ընկերություններին, ապա բանվորների, մասնավորապես գորգագործ բանվորուհիների դասակարգային գիտակցությունը դեռևս գտնվում էր իր սաղմնավորման մեջ։ Միայն 1908 թ. Օսմանյան սահմանադրությունից հետո վերջիններս սկսում են պայքարի որոշ աշխուժություն ցուցաբերել։ Այսպես, 1909 թ. գորգագործների գործադուլը Սեբաստիայում, եթե կըրում էր մասնակի բնույթ, ապա 1911 թ. ամռանը իտալացի արդյունաբերող Ալբերտ Ալիոտիի գորգագործարանում ավելի համառ և կազմակերպված բնույթ էր ստացել։ Գորգագործների գործադուլային հանձնաժողովը նյութական օգնություն ստանալու համար դիմում է բարեգործական ընկերությունների՝ Կարմիր Խաչին, Աղքատաց միության և այլն և միաժամանակ հրապարակային ժողով կազմակերպում իր պահանջները ներկայացնելու համար։ Գործադուլավորների «Պեզիրճենց արտ» հայկական թաղի պարտեզներից մեկում կազմակերպված միտինգում ելույթ է ունենում նաև բանաստեղծ Դանիել Վարուժանը։

Գորգագործ բանվորուհիները կարողանում են միայն չորս օր դիմանալ։ Գործադուլի նման արագ պարտությունը ուներ անշուշտ իր պատճառները։ ա) Սեբաստիայում ընդհանրապես բանվորները, այդ թվում և գորգագործ բանվորուհիները դեռևս դասակարգային գիտակցության չէին եկել։ Սեբաստիայում չկար բանվորական քաղաքական կազմակերպություն, որ իգեապես ղեկավարեր բանվորական գործադուլը և կարողանար պաշտպանել գործա-

[40] Ս. Ս. Գ., Փոքր հայքի հիշատակներ, մասն Ա., 1917, Ցիքակո, էջ 278—279։

դուլավորների տնտեսական շահերը, ը) ուժեղ էր նաև եկեղեցու ազդեցությունը, մանավանդ կանանց վրա, և պատահական չէ, որ 1911 թվականի դորգագործների այդ

Նկ. 13. Եփրատ գետի մի ափից մյուսը փոխադրող տկանավը։

գործադուլը կազմալուծելու մեջ մեծ դեր է խաղում Սեբաստիա քաղաքի ս. Սարգիս եկեղեցու քահանա Եփրեմ Թորգոմյանը, որը այդ բանի համար երկու անծանոթների կողմից լուսաբացին, եկեղեցի գնալու ժամանակ, դանակոծվում է։ Ի դեպ, դորգագործների գործադուլի կազմակերպումը, Տեր Եփրեմի կողմից գործադուլի վրա թողած բացասական ազդեցությունը գտել է իր արտահայտությունը այդ ժամանակվա Սեբաստիայի տիկնանց «Հայ կարմիր խաչի» վարչության նախագահ՝ տիկին Մարի Մինասյանի (բանաստեղծ Միսաք Մեծարենցի ազգականը) կողմից գրված մի ընդարձակ բանաստեղծության մեջ։

Քարավանային առևտուրը—Գամիրքի հայերի գլխավոր զբաղմունքներից մեկն էլ առևտուրն էր։ Բացի քաղաքային նստակյաց առևտրից, գոյություն ուներ նաև փոխադրական տարանցիկ առևտուր, որը իր վրա կրում էր միջնադարյան քարավանային առևտրի կնիքը։

Գամիրքում առևտրի նման ձևը բխում էր նաև նրա աշխարհագրական բնական պայմաններից։ Ինչպես հայտնի է, Գամիրքը երկու ծովերի՝ Սև ծովի և Միջերկրականի՝ Կիլիկիայի և Պոնտոսի միջև կազմում է մի տեսակ փակ շրջան, որը հնագույն ժամանակներից մինչև համաշխարհային առաջին պատերազմը զուրկ էր երկաթուղուց։ Ասորեստանյան, խեթական, պարսկական գլխավոր ճանապարհներն այդ գավառը համարյա շրջանցում էին։ Միջագետքից եկող ճանապարհը անցնում էր Մալաթիայից Սարոսի հովտով, Դարենտեի, Կյուրինի հարավից դեպի Կեսարիա, իսկ Կեսարիայից Սեբաստիա տանող ճանապարհը անցնում էր Յոզգաթ (Պերիա)—Եվդոկիա գծով։ Միակ խճուղին, որ հետագայում անցնում էր Հալիսի հովտով՝ Կեսարիայից ուղիղ դեպի Սեբաստիա, ուներ մոտ 145 կիլոմետր երկարություն, որտեղից այժմ (1924 թվականից) անցնում է երկաթուղին։ Այսպես, մինչև համաշխարհային առաջին պատերազմը Գամիրքի ներքին հաղորդակցության համար գրաստային ճանապարհներից ու արահետներից բացի, հարմար խճուղիներ գոյություն չունեին։

Այնուամենայնիվ, Գամիրք գավառը, ամբողջությամբ վերցրած, թեկուզ բնափակ տնտեսության պայմաններում, ինքնաբավ չի եղել և նրա առանձին մասերի բնակիչները ստիպված են եղել, դեռ հնագույն ժամանակներից, իրենց արտադրանքն ու

հավելյալ մթերքները ուրիշ շրջանների կենսամթերքների ու այլ ապրանքների հետ փոխանակել, իսկ հետագայում՝ վաճառել։

Գամիրքում ապրանքափոխադրությունը կատարվում էր մի քանի ձևերով՝ դաշտային՝ տափարակ վայրերում, գլխավորապես եզան ու գոմեշի սայլերով, գետերի՝ Հալիսի վրա՝ «մավանայով», Եփրատի և Մելաս գետերի վրա՝ տկանավով (նկար № 13. Եփրատի վրա տկանավով նավարկումը)։ Սակայն ամենատարածվածը հանդիսանում էր դրաստային փոխադրությունը։ Այդ իսկ պատճառով ճանապարհներից զուրկ Գամիրքի լեռնային մասերում քրդերի, ավշարների կողմից նույնիսկ եզը օգտագործվում էր որպես բեռնատար կենդանի։ Գամիրքում, նախքան մեր թվականության երկրորդ հազարամյակը, որպես դրաստ օգտագործվել է էշը, ձին, շորին, իսկ միջնադարում՝ նաև ուղտը։ Այստեղ, անշուշտ, խոսքը չի վերաբերում գյուղացիների կողմից քաղաքում մթերք փոխադրելուն, որը կատարվում էր հնարավոր բոլոր միջոցներով՝ եզան կամ գոմեշի սայլով, ձիակառքով, ձիով, ջորիով և, վերջապես, էշով։

Նշելու է, սակայն, մի առավելություն, որ Գամիրքում ապրանքափոխադրությունը, որպես զբաղմունք կատարվում էր կանոնավորապես, համարյա ամբողջ տարին։ Եթե մինչև 20-րդ դարի սկզբները փոխադրության գլխավոր միջոցը հանդիսանում էր դրաստը՝ ուղտապաններ, ջորեպաններ (զաբրճի)[41], իշապաններ (կուլուկճի), ապա հետագայում հանդես էին եկել նաև կառապաններ։ Կառապանությամբ. հատկապես զբաղվում էին Սեբաստիայի, Կեսարիայի և նրանց արվարձանների. կամ գլխավոր խճուղիների մերձակա քաղաքատիպ վայրերի բնակիչների մի մասը։ Օրինակ, Սեբաստիայի Բրգնիկ գյուղը համարյա ամբողջությամբ զբաղվում էր կառապանությամբ։

Պատմական փաստերի վկայությամբ, հին Հայաստանի գավառներում և Գամիրքում 15—16-րդ դարերում բավականին զարգացած է եղել և քարավանային առևտուրը։ Առաջավոր Ասիայի երկրներում մոլեգնած պատերազմների և 17-րդ դ. սկզբնեբին հատկապես ջալալիների շարժման հետևանքով, հայկական գավառների և նրանցով անցնող քարավանային առևտուրը համարյա դադարում է և վերսկսվում 17-րդ դ. կեսերից ու զարգանում կրկին 19-րդ դարի սկզբներից։ Այդ ժամանակ Գամիրքում քարավանային առևտուրն սկսողներից առաջինները հանդիսանում են կյուրինցիները, որոնց հետևում են նաև կեմերեկցիները։

Կյուրինցիները ձիերով, իսկ կեմերեկցիները՝ ուղտերով[42] ապրանք էին փոխադրում Հալեպից Կեսարիա, Կեսարիայից Տրապիզոն, ապա Կեսարիայից Բրուսա, Կեսարիայից Ադանա—Մերսին, Ադանայից Հալեպ։ Այդ մասին «Կիւրինի Յուշ»-ը տալիս է հետևյալ շահեկան տեղեկությունները։ 1800 թվականներին ամբողջ Անատոլիայի համար առևտրական ամենամեծ կենտրոնը հանդիսանում էր Հալեպ քաղաքը, որտեղից Կեսարիա ապրանք փոխադրելու վաճառականության գործը ձեռնարկել է կյուրինցին։ Եվ այդ այնպիսի մի ժամանակ, երբ նույն այդ շրջանի քաղաքացիները, թուրք և քուրդ զանազան ցեղերի ասպատակություններից վախենալով, չէին համարձակվում ճամփորդություն անել և առևտրական հարաբերություններ ստեղծել ուրիշ վաճառաշահ քաղաքների հետ։

Կյուրինցիների ապրանք փոխադրելը առաջին շրջանում ուներ հետևյալ պատկերը. քարավանը՝ 70—80 անձից բաղկացած մի խումբ, 80—100 բեռնավորված ջորիներով և ձիերով ճանապարհ էր ելնում Հալեպից։ Երեսուն ընտրյալ և վարձված զինակիրներ, որպես պահակախումբ, տասը՝ առաջից, տասը՝ մեջտեղից և տասն էլ ետևից ուղեկցում էին քարավանին, իսկ բազմաթիվ մեծ ու փոքր վաճառականներ կամ այլ ճամփորդներ, բոլորն էլ քարավանային խմբում ունեին իրենց հատուկ պարտականությունները և այդ պարտականությունները անխախտ կատարում էին ողջ ճանապարհին։

Մայիս—օգոստոս ամիսներին քարավանները սովորաբար իջևանում էին դուրսը՝ բացօթյա, հարմար վայրերում, ուր

[41] Ջորեպան էր կոչվում, բայց փոխադրությունը լինում էր ձիերով։

[42] Կեմերեկում ուղտ ունեցող ընտանիքներից հայտնի էին՝ Էհմալենք, Գատրօղլունք, Ճինեկենք, Պեկմեզենք, Մինեսերենք, Արղումանենք և ուրիշներ։

բեռները որպես պատնեշ շուրջանակի դասավորվում էին, որպեսզի կանխակալ հարձակման վտանգի հնարավորության դեպքում կարողանան կազմ ու պատրաստ դիմագրել թշնամուն։ Երթևեկի ապահովության համար նրանք վարում էին այսպես ասած սիրաշահելու քաղաքականություն։ Հրոսապետներին, գյուղապետներին, ցեղապետներին, նույնիսկ Զեյթունի հայ մեծամեծներին պարգևի անվան տակ կաշառք էին տալիս։ Ընդհանրապես որպես նվեր տրվում էր մի շալվարացու, չուխա, պատրաստի աբա, դրա շապկի համար մետաքսե կերպասներ, սուրճ, շաքար, նարգիլեի համար թենպեքի և այլն[43]։

Քարավանային առևտուրը յուրահատուկ մի կոոպերացիա էր, որն ուներ իր ղեկավարը (ճելեվտեր կամ ճելեպտեր)։ Սա ընդհանրապես լինում էր ամենահարուստ և փորձառու մի վաճառական և միաժամանակ կատարում էր ընդհանուր ծախսարարի պաշտոնը։ Քարավանն ուներ իր ընդհանուր գույքը և ներքին կանոնները։ Քարավանի գույքը կայանում էր հետևյալում. վրան, ապրանքները անձրևներից պաշտպանելու համար ծածկոցներ (քաշեր), կերակրի համար պղնձյա կաթսա, յուղաման, մածունի տոպրակ սպիտակից (բյազից), կովի կաշվից ջրաման՝ ղալանջ (24 լիտր ջրի համար) և այլ մանր իրեր, իսկ անդամներից յուրաքանչյուրն ուներ իր սեփական աբան կամ յափնջին՝ գիշերելու համար։ Քարավանի անդամներից յուրաքանչյուրը իր առևտրական գործառնությունների ազատությունը պահելով հանդերձ, ճանապարհի ընթացքում կատարում էր իրեն բաժին ընկած պարտականությունը։

Գամիրքում մինչև համաշխարհային առաջին պատերազմը քարավանային առևտուրը թեև շարունակում էր պահել իր միջնադարյան քարավանային ձևը, սակայն որոշ փոփոխությունների էր ենթարկվել։ Ապրանքափոխադրությունը առաջվա նման հեռավոր քաղաքների հետ չէր կատարվում և ոչ էլ առաջվա նման բազմամարդ էր։ Քարավանային առևտրի երկրորդ շրջանում (1900—1914 թթ.)։ Կյուրինի ջորեպանների սովորական ճանապարհը գլխավորապես երեք գծի վրա էր։ Կյուրինից Կեսարիա, որը տևում էր վեց օր, Կյուրինից Սեբաստիա՝ 4 օր, Կյուրինից Մաբաշ՝ 7 օր։ Կեմերեկում քարավանային առևտրով զբաղվողները նույնպես առաջվա նման հեռավոր վայրեր ուղտերի քարավաններով չէին ճանապարհորդում, այլ պարզապես դարձել էին իշապաններ, որոնք Կեմերեկից մինչև Սամսուն գնում էին տասն օրվա ընթացքում, մինչև Մերսին՝ տասն օր, Կյուրին՝ չորս օր, Սեբաստիա՝ 3—4 օր, իսկ Կեսարիա՝ 2 օր։

Նկատելի էր նաև այն, որ վերջին շրջանում ոչ միայն առևտրի ասպարեզն էր նեղացել, այլև ուղտերի փոխարեն որպես գրաստ օգտագործվում էին ձիեր և էշեր։ Անցյալում Գամիրքում, հատկապես Կեմերեկի և Կեսարիայի շրջանում, ուղտերը բուծվում և օգտագործվում էին երկար ուղևորության համար, որպես փոխադրության գլխավոր միջոց, բայց 1898—1900 թթ., երբ Հայդար Փաշայից (Սկյուտար) մինչև Բաղդատ երկաթգիծ է հաստատվում, ուղտը մղվում է ետին պլան, որովհետև թեև այն ձեռնտու էր՝ դիմանում էր երկար ճանապարհորդության, անոթության և ծարավի, սակայն ուղտը ոչ երկրագործության համար էր պիտանի և ոչ էլ նրա միսն ու կաթը որպես ապրանք կարելի էր վաճառել շուկայում, հատկապես Գամիրքի նման ոչխարաբուծությամբ հարուստ մի գավառում։

Միաժամանակ ուղտը շատ թանկ էր և, Գամիրքի կլիմայական պայմաններում, սակավ դիմացկուն, քան ջորին, էշը և ձին։ Ուղտը ենթակա էր «ճեմպեր» կոչված մի հիվանդության, որը հաճախ մահացու էր նրա համար։ Երեք տարին լրացած բեռնատար ուղտը արժեր 12—15 օսմանյան ոսկի, իսկ բեռնատար էշը՝ 2—3 ոսկի, ձին՝ 4—5 ոսկի։ Ուստի և ուղտի կորուստը ծանր էր տիրոջ համար, քան էշինը[44] կամ ձիունը, քանի որ մեկ ուղտի գնով կարելի էր գնել մինչև 5 էշ կամ 3 ձի[45]։ Սակայն ուղ-

[43] «Կիւրինի Յուշ», Նյու-Յորք, 1931, Ա տարի, թիվ 3։

[44] Խեթական կոդեքսում հիշատակություն կա այն մասին, որ 90 կիլոգրամ կամ մեկ տաղանդ բեռնավորման կարողություն ունեցող էշը արժե մեկ մին արծաթ։

[45] Գամիրքում էշով, ձիով մեկ լիր (վեց օխա, կամ 8 կգ) ապրանք փոխադրողները մեկ օրվա ճանապարհի համար ստանում էին քսան փարա կամ կես ղրուշ։ Կյուրինից մինչև Սեբաստիա (Սվաղ)

տերով փոխադրության վերացման գլխավոր պատճառը այն էր, որ վերանում է հեռավոր վայրերի հետ առևտուրը, իսկ մոտիկ տեղերի համար ձեռնտու էին մանր գրաստները։ Համապատասխան ձևով փոփոխվել էր և քարավանների կազմը, թեև քարավանի անդամներից հարուստ վաճառականները, ըստ իրենց նյութական կարողության, դեռ ունեին մեկ-երկու ծառայողներ[46], որոնք նույնպես «խզմետքար» էին կոչվում, բայց արդեն հանդես էին եկել նաև լտէշներ, այսինքն՝ ձեռքի ընկերներ, որոնք ոչ մի վարձ չէին ստանում, այլ, ինչպես իրենք, նույնպես և նրանց գրաստը (էշը կամ ձին) կերակրվում էին աղայի հաշվին և որպես փոխհատուցում սրանք էլ աղայի ապրանքն էին փոխադրում։ Քարավանապետը սկսել էր միջնորդի դեր կատարել քարավանի անդամների և նավահանգիստներում հաստատված բազմաթիվ վաճառականների միջև։

Գամիրքում հեռագնաց ապրանքափոխադրությունը, առևտրի մեջ առաջացած փոփոխությունները որոշ չափով կապված էին նաև Գամիրքի տեղական արդյունագործության զարգացման և գյուղատնտեսական որոշ մթերքների ապրանքայնության հետ։ 19-րդ դարի վերջերից կառապանները, չորեպանները, իշապանները ըզբաղվում էին արդեն ոչ միայն Գամիրքի արհեստագործական ապրանքների փոխադրությամբ, այլև տեղական մթերքների փոխադրությամբ և վաճառքով։ Սրանք հանդես էին գալիս որպես առևտրականներ միայն գյուղատնտեսական մթերքներ վաճառելով, իսկ արդյունագործական արտադրանքի համար սոսկ փոխադրողի դեր էին կատարում. որովհետև լավ էր կազմակերպված ոչ միայն Կյուրինի գոտիների և շալի, Արաբկիրի՝ մանուսայի, Սեբաստիայի և Կեսարիայի գորգի արտադրությունը, այլև դրանց վաճառման գործը։ Օրինակ, Կյուրինի և Արաբկիրի գործատերերը Թուրքիայի զանազան քաղաքներում արդեն ունեին իրենց գործակալները, մեծ մասամբ իրենց իսկ հարազատներից, որոնք զբաղվում էին փոխադրված ապրանքների ընդունմամբ և մեծաքանակ վաճառքով։

Գյուղատնտեսական մթերքների փոխադրման ու վաճառքի, ինչպես նաև գյուղատնտեսական գործիքների հայթայթման գործը վարում էին փոխադրական աշխատանքով զբաղվողները, որոնք կցված էին տեղական առևտրականներին։ Այս վերջինները մինչև քարավանի վերադարձը փերեզակների միջոցով գյուղացիներից գնել էին տալիս պահանջված գյուղատնտեսական մթերքները՝ ձու[47], ուլի տիկ[48], այծի մորթի, գառան բուրդ, ոչխարի գեղմ (յափազու),

---

բեռնատար ձիով չորս օրվա ճանապարհ է, այսպիսով, մի լիր ապրանքի փոխադրությունը մինչև Սեբաստիա արժեր երկու ղրուշ։ Նկատելով, որ ձին իր տիրոջ համար ապահովում էր 40 ղրուշ, չորս օրվա ճանապարհորդության համար՝ երեք ձին՝ 120 ղրուշ։ Էշի բեռը 10—12 լիր էր, ուրեմն, որպես եկամուտ, մեկ էշը 20—24 ղրուշ էր բերում, հինգ էշը՝ 100—120 ղրուշ։ Մինչդեռ ուղտը, որ 35—40 լիր բեռ էր վերցնում, նույն ճանապարհի համար, որպես եկամուտ բերում էր 70—80 ղրուշ։

[46] Ծառայողը, բացի ուտելիքից, որպես աշխատավարձ ամսական ստանում էր 150—180 ղրուշ։

[47] Ձուն Գամիրքում մինչև 1905 թվականը արտածման ապրանք չէր, հարյուրը արժեր 3 ղրուշ, հետագայում գինը բարձրանում է. նախ հարյուրը՝ 6—7 ղրուշ, իսկ Սամսոնում արժեր 15—16 ղրուշ։ Մինչ առաջին համաշխարհային պատերազմը՝ 1913 թ., ձվի հարյուրը տեղում արժեր 7-12 ղրուշ, իսկ Սամսոնում՝ 19—22 ղրուշ։

[48] Անասունների ծնի շրջանում, փետրվար-մարտին, շուրջ հինգ ղրուշով գնում էին նորածին որձ ուլերը, պայմանով, որ մինչև մայիսի 15-ը տերը պահեր։ Մայիսին վաճառականները քաղաքների և մեծ ավանների փողոցներում ու շուկաներում մեկ ուլի միսը վաճառում էին 1—2 ղրուշի, իսկ գնողը մորթին տիկ հանած, աղած, հանձնում էր վաճառականին։ Երբեմն միսը ձրի էր տրվում, որպեսզի ժամանակին, այսինքն՝ հունիսի վերջերին ուլի մորթին շուկա հասնի։ Երեք ամսական ուլի մորթուց պատրաստվում էր լավ որակով շեվրե։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Գամիրքում գյուղատնտեսական գործիքներից երանը արժեր 8 ղրուշ, հոսիլին 4, կամնը, Թեճիր լեռան կայծքարով պատրաստված՝ 18—20 ղրուշ, սայլի ծղնին (մաղը) կաղնու և կամ հաճրի (կյուրկենի փայտից) 8—10 ղրուշ, կացինը, մեկուկեռ կիլոգրամանոց՝ 10—12 ղրուշ, ուրագը՝ 8 ղրուշ, պողպատից մանգաղը՝ 15—20 ղրուշ, ղալիճը՝ 4—6 ղրուշ...

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական մթերքների գներին, տեղում ցորենի ձավարի մեկ շեֆիկը (8 կգ) արժեր երկու և կես ղրուշ, իսկ Սամսոնում՝ երեք ու կեսից չորս ղրուշ, ուլի մորթը՝ տեղում արժեր 3—4 ղրուշ, իսկ Սամսոնում՝ 6—7 ղրուշ։ Միրանի կորիզի լիտրը (վեց օխա, կամ 8 կգ) արժեր երեքից չորս ղրուշ, իսկ Սամսունում՝ 6, անասունի ոսկորի լիտրը՝ մեկ ղրուշ, գազի խեժի առաջին տնսակի լիտրը՝ 120—150 ղրուշ։

գազի խեժ (քիդրե), ծիրանի կորիզ, ձավար (բղլուր) և այլն։

Այդ մթերքների մի մասը փոխադրվում էր Թուրքիայի ներքին քաղաքները, մյուս մասը՝ ծովեզրյա քաղաքները՝ Սամսոն, Ունյա, Կիրասոն, Մերսին, որտեղից ուղարկվում էր եվրոպական երկրները։ Ջորեպանները վերադարձին այդ նավահանգիստներից բերում էին շաքար, հատկապես զլուխ շաքար, նավթ, բրինձ, օճառ, իսկ Սեբաստիայից և Կեսարիայից՝ չթեղեն, կոշկեղեն, գյուղատնտեսական գործիքներ և վաճառում խանութպաններին։

Այսպես, ուրեմն, մինչև առաջին համաշխարհային պատերազմը Գամիրքում, հատկապես նրա քաղաքամերձ գյուղական վայրերում, թեև դեռ պահպանվում էր բնատնտեսությունը, բայց 19-րդ դարի 80-ական թվականներից սկսած, առևտրական հարաբերությունների զարգացման հետևանքով, իրենց արտադրությունը հարմարեցրել էին ներքին և արտաքին շուկաների պահանջներին։ Օրինակ, Կեսարիայի շրջանի Թաշխան գյուղը մասնագիտացել էր սիսեռի մշակությանը՝ լեպլեպիի համար, Կեմերեկի շրջակա գյուղերից Թեքմենը՝ սըխտորի (ապուխտի համար), Կեմերեկը կտավատի ձեթի համար, իսկ Արգեոս լեռան շրջանի գյուղերում՝ Էվերեկում, Զոմախլուում, Ինճեսուում և այլն, իրենց քարքարոտ, անջրդի վայրերը օգտագործում էին ալաժահրա (ճեհերի) կոչվող բույսի մշակության համար[49], որի հունտերից ստացվում էր դեղին ներկանյութ, որը լայն սպառում ուներ եվրոպական շուկաներում, քանի դեռ նոր եղանակով քիմիական ներկանյութեր չէին ստացվել։

Այս ամենը վկայում է գամիրքահայերի տնտեսական կյանքում ու կենցաղում առաջ եկած որոշակի փոփոխությունների մասին, որոնք ընդհատվեցին առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1915 թ., հայ բնակչության տեղահանությամբ ու բնաջնջմամբ։

---

[49] Տե՛ս Հակոբ Ա. Արզումանյան, Էվերեկի պատմությունը, Գամիրք, 1935, էջ 59։